ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹ

Եղեգնափող

11–12

(206-207)
Նոյեմբեր-դեկտեմբեր, 2023

Էդվարդ Միլիտոնյանը երրորդ անգամ ընտրվեց Հայաստանի գրողների միության նախագահ

ԵՐԵՎԱՆ, 25 ՆՈՅԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հայաստանի գրողների միության 20-րդ համագումարի ընթացքում, որը տեղի ունեցավ նոյեմբերի 25-ին, բաց քվեարկությամբ և միաձայն միության նախագահի պաշտոնում վերընտրվեց Էդվարդ Միլիտոնյանը:

«Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ Միլիտոնյանը ներկայացված միակ թեկնածուն էր:

Ամփոփելով միության հինգ տարվա ընթացքում կատարած աշխատանքը՝ նա ասաց, որ այն եղել է բազմաբնույթ, ներկայացվել է ինչպես «Գրական թերթ»-ում, այնպես էլ լուսաբանվել է լրատվամիջոցներով: Ամեն վեց ամիսը մեկ ՀԳՄ նախագահը ներկայացրել է կիսամյակային հաշվետվություն, որը բավարար է գնահատվել:

«Գրողների միության ձևավորած գրական մթնոլորտը նպաստել է կազմակերպելու ոչ միայն ավանդական տարատեսակ միջոցառումներ Երևանում, մարզերում, սփյուռքում, այլև կյանքի հրամայականով ավելացած նոր միջոցառումներ:

«Գրական թերթը» մշտապես տպագրում է գրողների կարծիքներ, հոդվածներ, հրապարակախոսական նյութեր, որոնք արտացոլում են ժամանակակից կյանքի հուզող խնդիրները, և յուրաքանչյուր գրող պատասխանատու է իր խղճի և գրչի առջև: Երբեմն կան մարդիկ, որ գրողներից պահանջում են անել այն, ինչ պետական մարմինները, կուսակցությունները, տարատեսակ միավորումները, խմբերը, հարկ է, որ իրենց ծրագրերով իրագործեն: ՀԳՄ նախագահությունը 44-օրյա պատերազմից հետո իր հասարակական պարտքն է համարել արտահայտել հայրենիքի առջև կանգնած խնդիրները, այդ խնդիրների լուծմանը ի պաշտոնե ընտրված, ինչպես նաև ընդդիմադիր գործիչների մասին իր վերաբերմունքը», -շեշտեց նա:

Միլիտոնյանի խոսքով՝ իրենք տարվա ընթացքում տարբեր միջոցառումներ են կազմակերպում: Միլիտոնյանը թվարկեց դրանցից մի քանիսը՝ Գիրք նվիրելու օր, Մանկական գրքի շաբաթ, գրողների հոբելյաններ, հանդիպումներ դպրոցականների հետ, Թարգմանչաց տոն և այլն:

Ավելի վաղ Էդվարդ Միլիտոնյանը «Գրական թերթ»-ում հրապարակված հարցազրույցում անդրադարձել էր միության հրատարակչական աշխատանքներին ու նշել՝ ՀԳՄ-ն հրատարակել է «Մենք և աշխարհը» շարքից գրքեր, ՀԳՄ նախագահի նախաձեռնությամբ հրատարակվել են «Ֆրանսիայի մոգական ուժը», «Բազմաձայն երկիր Վրաստան», «Ներշնչանքի թռչունը», «Ամերիկան հեռու և մոտ» գրքերը, հիմնադրվել են տարեկան անթոլոգիաներ, «Պոեզիա» տարեգիրքը, ինչպես նաև «Ծիծեռնակ» հանդեսի հրատարակությունը Միլիտոնյան ընտանիքի կողմից:

Ընթացքի մեջ է 40 տարեկանից բարձր գրողների ստեղծագործությունների անթոլոգիաների նախապատրաստական աշխատանքները «Արմավ» հրատարակչության հետ:

Միությունն օժանդակել է պաշարված Լեռնային Ղարաբաղի գրողների գրքերի հրատարակությանը, աջակցել է «Երբ Արցախը պաշարված էր» գրքի տպագրությանը: 2022 թվականին կազմվել է ժամանակակից գրողների ստեղծագործությունների «Պապ ու տատի թռռները» գիրքը ԼՂ-ի դպրոցների համար:

ՀԳՄ-ն պարբերաբար ձեռնարկել է որպես նվեր գրողների հոբելյաններին (սկսած 60 տարեկանից) «21-րդ դար» գրքերի տպագրություն: ՀԳՄ-ն «Վան Արյան» հրատարակչության հետ համատեղ տպագրել է մոտ 30 գիրք: ՀԳՄ հրատարակչությունը լույս է ընծայել 38 գիրք:

Խոսելով երիտասարդ գրողներին խրախուսելու ուղղությամբ կատարված աշխատանքի մասին՝ միության նախագահը հիշեցրել էր, որ կազմակերպում են «Մինչև 27 տարեկան երիտասարդ ստեղծագործողների մրցանակաբաշխություն»: Երիտասարդները նաև մասնակցում են ՀԳՄ բոլոր մրցանակաբաշխություններին: Ծաղկաձորի ստեղծագործական տանն ամեն տարի հոկտեմբերին կազմակերպվել է երիտասարդ գրողների եռօրյա հավաք: «Գրեթերթն» ամբողջությամբ հրատարակում է երիտասարդ գրողներին: Տպագրվում են նաև ՀԳՄ մյուս գրական թերթում ու ամսագրերում: ՀԳՄ կլոր սրահում երիտասարդները հավաքվում և քննարկում են իրենց հուզող հարցեր:

Անդրադառնալով ապագա ծրագրերին՝ Հայաստանի գրողների միության նախագահը շեշտել էր՝ 2024 թվականից նախատեսվում է 70-ից բարձր տարիքի գրողներին ազատել անդամավճար մուծելուց, ստեղծել տեսահաղորդումների ստուդիա (գրական հաղորդումներ, լրատվություն և այլն), վերականգնվել է «21 դար» մատենաշարը, ամեն տարի տպագրել ժամանակակից պոեզիայի տարեգիրք (էդ. Միլիտոնյանի և Ավիկ Դերենցի նախաձեռնությամբ), տպագրել «Արձակ դաշտեր» կարճ պատմվածքի անթոլոգիայի երրորդ գիրքը, սահմանել նոր մրցանակներ, անցկացնել գրական պլենար նիստեր, ՀԳՄ մարզային բաժանմունքների համար ձեռք բերել նոր աշխատասենյակներ, նպաստել գրողների ստեղծագործությունների հրատարակման ընդլայնմանը:

Ընթանում է նախապատրաստական աշխատանք՝ ԱՄՆ-ում կազմակերպելու «Գրական մարաթոն»:

ՀԳՄ Շիրակի մարզային մասնաճյուղի համագործակցությունը մայր կառույցի հետ վերջին 5 տարիներին՝ ընդհանուր ուրվագծմամբ

Ինչպես նախորդ, այնպես էլ հաշվետու 5 տարիների ընթացքում ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքը կատարել է գրահրատարակչական և գրական-կազմակերպական ծավալուն աշխատանք ՀԳՄ-ի գործուն աջակցությամբ:

Գրական բազմաթիվ ցերեկույթներ, շնորհանդեսներ, գրքերի քննարկումներ, հեղինակների հետ հանդիպումներ անցկացվել են Շիրակի մարզի մշակութային և ուսումնական տարբեր հաստատություններում: Մենք համագործակցել և համագործակցում ենք Գյումրու գեղագիտության ազգային կենտրոնի, Շիրակի մարզային գրադարանի, Գիտությունների ազգային ակադեմիայի Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի, Գյումրու Ավ. Իսահակյանի անվան տուն-թանգարանի, Հովի. Շիրազի հուշատուն-թանգարանի, «Բեռլին» հյուրերի տան, Շիրվանյան կենտրոնի, Գյումրու «Մենենջմենտի» համալսարանի, Ախուրյանի համայնքային գրադարանի, ՇՊՀ-ի քոլեջի, Գյումրու մանկապատանեկան «Ընտանիք» կենտրոնի, Գյումրու բժշկական քոլեջի, Գյումրու կայազորի և այլ կառույցների հետ:

2019, 2021 և 2023 թթ. Գյումրիում է անցկացվել «Արարատ Մկրտումյան» հանրապետական երիտասարդական գրական մրցանակաբաշխության արդյունքների ամփոփումը, որին մշտապես մասնակցել է ՀԳՄ նախագահ էդվարդ Միլիտոնյանը /ի դեպ, նրա առաջարկությամբ այս մրցանակաբաշխությունը դարձավ հանրապետական/:

Պետական աջակցության դադարեցումից հետո ՀԳՄ նախագահի գործուն աջակցությամբ տպագրվում են նաև շիրակցի գրողների գրքերը, նրանցից շատերի գործերն ընդգրկվել են հրատարակված անթոլոգիաներում և թարգմանական ծրագրերում:

Անշուշտ, ոգևորիչ է գրական նոր սերնդի մասնակցությունը Ծաղկաձորի Գրողների տանը կազմակերպվող երիտասարդ գրողների եռօրյա սեմինարներին, որոնք ամփոփվում են մրցանակաբաշխությամբ: Շիրակցի երիտասարդ մասնակիցները մշտապես արժանացել են մրցանակների:

Ծաղկաձորյան ստեղծագործական տան բացառիկ հնարավորություններից պարբերաբար օգտվում են նաև Շիրակի մարզի ՀԳՄ 18 անդամներից նրանք, ովքեր դիմում են:

Մեր բաժանմունքի պաշտոնաթերթ «Եղեգան փողը» այս տարիների ընթացքում կարողացել է պահել իր ինքնատիպ ձեռագիրն ու պարբերականությունը: Բոլորովին վերջերս ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքը հանդիսությամբ նշեց պարբերաթերթի 200-րդ համարի լույսընծայումը, որին մասնակցեց ՀԳՄ պատվիրակությունը: ՀԳՄ նախագահի կողմից Շնորհակալագրի արժանացան խմբագրակազմի անդամները:

Տարիների ընթացքում բաժանմունքը պարբերաբար խնդիրներ է ունեցել գրասենյակի հետ կապված: ՀԳՄ նախագահ էդվարդ Միլիտոնյանի աշխատանքային հանդիպումները Շիրակի տարբեր մարզպետների և քաղաքապետների հետ կարգավորել են և՛ այս, և՛ այլ հրատապ լուծում պահանջող խնդիրները:

Ամփոփելով՝ ցանկանում եմ մեր երախտագիտությունը հայտնել բոլոր այն կառույցներին ու անհատներին, որոնք մշտապես եղել են մեր կողքին՝ զորակցելով մեզ՝ ի հաստատումն այն գաղափարի, որ գրականությունն ու մշակույթը մարդկանց կարող են միավորել, որի անհրաժեշտությունը այսօր ավելի քան հրամայական է:

Անդրանիկ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ՀԳՄ Շիրակի մարզային
բաժանմունքի նախագահ

«ԱՐԱՐԱՏ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ» ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ-2023

Դեկտեմբերի 6-ին Գյումրու Գեղագիտության ազգային կենտրոնի դահլիճում տեղի ունեցավ «Արարատ Մկրտումյան» գրական հիմնադրամի սահմանած ամենամյա հանրապետական, երիտասարդական, գրական մրցանակաբաշխության մրցանակների հանձնումը՝ արձակի ժանրում: Մրցանակաբաշխության արդյունքների ամփոփումը տեղի էր ունեցել դեռևս 2023 թվականի հոկտեմբերին: Շիրակ և Լոռի աշխարհների՝ մինչև 31 տարեկան 17 երիտասարդ ստեղծագործողներ արձակ անվանակարգում արժանացան խրախուսական մրցանակների: Մրցանակաբաշխության հիմնադիր Արթուր Մկրտումյանը (բանաստեղծի եղբայրը) ողջունեց և շնորհավորեց ստեղծագործողներին, նրանց հանձնվեցին վկայագրեր և «Կրակի հայելին» խորագրով գրական ալմանախը, որտեղ ընդգրկված են մասնակիցների արձակ ստեղծագործությունները: Գլխավոր մրցանակը շնորհվեց գյումրեցի Հայկ Տեր-Մկրտչյանին՝ Արարատ Մկրտումյանի դիմանկարով հուշամեդալ և հիմնադրամի հովանավորությամբ տպագրված «Հետապնդող հող» ժողովածուն: Գրական հիմնադրամը ստեղծման օրվանից համագործակցում է «Արմավ» հրատարակչության հետ: ՀԳՄ Շիրակի մարզային մասնաճյուղի նախագահ, բանաստեղծ Անդրանիկ Կարապետյանը անդրադարձ կատարեց «Արարատ Մկրտումյան» հիմնադրամի ստեղծման պատմությանը, ՀԳՄ նախագահ Էդվարդ Միլիտոնյանը իր ելույթում կարևորեց մրցանակաբաշխության դերը՝ ի սատարումն երիտասարդ ստեղծագործողների և ի շահ գրականության զարգացման: Գրական այս առանձնահատուկ երևույթի մասին իրենց ելույթներում խոսեցին նաև գրական մրցատյանի ներկայացուցիչները. ՀԳՄ Լոռու մասնաճյուղի նախագահ, բանաստեղծ Մանվել Միկոյանը, բանասիրական գիտությունների թեկնածու Վալերի Փիլոյանը, բանաստեղծ, թարգմանիչ Խորեն Գասպարյանը: Շնորհակալության խոսքեր ասաց նաև «Շիրակ» գրական-մշակութային ամսագրի գլխավոր խմբագիր, բանաստեղծ Սամվել Մարգարյանը՝ գնահատելով գրական մեկենասության դերն ու կատարված աշխատանքի արդյունքները: Գյումրու քաղաքապետի խորհրդական Ռոբերտ Անդրեասյանը ողջունեց գրականությունը սատարող նախաձեռնությունը և շնորհակալ եղավ միջոցառմանը ներկա գտնվելու համար: Գագիկ Սարոյանի «Դեկտեմբերի տանուտերը Արարատ Մկրտումյանն է» բանաստեղծությունը ներկաներին վերստին տեղափոխեց 1988 թվական, երբ Սպիտակի ահեղ երկրաշարժին ... (//Բայց մեր զոհերը, խաղաղ զոհերը խաղաղ օրերի... //Ա. Մ.- «Ռոզի կաֆեի զավակները») զոհվեցին մեր գրի ու հրի ընկերները՝ թախծոտ ու հանճարեղ: Հիմա ո՞ւր են նրանք...

Դահլիճում էին մտավորականներ, գրողներ, ուսանողներ, Արթուր Մկրտումյանի ընտանիքը և անշուշտ Արարատ Մկրտումյանի դուստրերը՝ Լիլիթ և Մարիամ Մկրտումյանները: Ողջ ցերեկույթն անցավ՝ շրջանակված Արարատ Մկրտումյանի բանաստեղծության հեքիաթի եզրագծով, որտեղ Հեքիաթասացը մեզնից հեռացած պոետն էր, բայց նույնքան մոտ ու ներկա՝ իր ստեղծագործությամբ: Գեղեցիկ օրվա թրթիռները ներկաներին հաղորդեցին և այն առավել անկրկնելի դարձրին բանաստեղծուհիներ Սոնա Անտոնյանը և Ռոզա Հովհաննիսյանը: Մեկ օր ևս արժևորվեց՝ ապրելու և արարելու:

Սոնա ԱՆՏՈՆՅԱՆ



Հայկ ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ

Հատված «ՀԵՏԱՊՆԴՈՂ ՀՈՂ» գրքից

Դեռ անանուն ու ահեղ

Հիմա, երկար քայլելուց ծանր շնչելով, նետվեցի մեր զինվորների փորած փոսի մեջ, փորձեցի ավելի հարմարավետ նստել, ձգեցի ոտքերս և հանգստացա մինչև նոր մարտի բռնկումը: Ոչ ոք չգիտի, թե որքան ժամանակ ունի հանգստանալու համար՝ մեկ րոպե, երկու, տասը կամ մի ամբողջ ժամ: Ուշադրությամբ նայեցի որսացող խավարի մեջ: Վախենում էի չտեսնել հրթիռը. խիտ մառախուղի մեջ սովոր էի հրթիռի սպասել, նույնիսկ արդեն սկսել էի կարոտել դրան: Հրթիռը միշտ ազդանշան է ճակատամարտի ու նոր հարձակումների մասին: Եվ ամեն անգամ մտածում էի՝ «Ո՞ւր է նա ինձ այսօր հրավիրելու, ինչպե՞ս կավարտվի այս մարտահրավերը: Զինվորներից շատերը զոհվել են, հրթիռներից հետո չեն վերադարձել տուն, բայց ոմանք նրանցից շատ ավելի փորձառու էին, կամ մինչ այժմ նրանց բախտը բերել է»:

Մտածելով չվերադարձածների մասին՝ ես պատկերացրի՝ միգուցե նույն ճակատագիրն է ինձ սպասում գետի կամ խրամատի մոտ՝ քաղաքի կամ գյուղի վերևում, երկնքի ինչ-որ հրապարակում: Մեկ անգամ չէ, որ ստիպված էի վայրեջք կատարել խոր փոսի մեջ, որ չընկնեի մահացու սուզումի մեջ, չպայթեի օդում և կենդանի այրվեի: Եվ այսպես, ես ուզում էի հավատալ, որ թռիչքների քանակը կհամապատասխանի վայրէջքների քանակին: Այդպես էլ եղավ: Քանի անգամ հրթիռը բարձրացավ բոցավառ երկինք, այնքան անգամ ես վերադարձա տուն: Ո՞ւր է ինձ այժմ կանչելու հրթիռը. իմ հոգին զգում է, որ վերջինն է լինելու իմ կյանքում հենց այստեղ՝ մեր պաշտպանության այս հատվածում: Մենք՝ զինվորներս, ամբողջ հանձնառությունը դնում ենք Աստծո վրա և հույս ունենք, որ նա կպաշտպանի մեզ. կռվի թեժ պահին ամենաանհավատ մարդն էլ դառնում է հավատացյալ: Բայց ավելի հեշտ է հավատալ ուժեղ ընկերոջդ, քան թույլ Աստծուն: Ինչքա՞ն ժամանակ ենք այստեղ՝ օրե՞ր, գիշերնե՞ր: Մի՛ հաշվեք:

Դանդաղ քայլողիս սառը աչքերը վառվում են, և ամեն օր նույն նպատակը՝ տուն վերադառնալ, և մի տարօրինակ հոտ է սպասում մեզ՝ հուսահատ հյուրերիս:

Քշեցի պատերազմի մասին մտքերը: Բայց ամեն ինչ ապարդյուն էր. ես չեմ կարող խուսափել պատերազմից, այն արդեն մտել է իմ կյանք և մտել է հաստատուն:

-Նահա՛նջ, նահա՛նջ:

Թիկունքիս կանգնած փոխգնդապետի ռադիոկապից անընդհատ լսվում էր անծանոթ ձայնը: Նայեցի նրա դեմքին, գլխով ու աչքերով հասկացրի, որ չենք պատրաստվում նահանջելու: Նայեցինք միմյանց աչքերի մեջ և ամեն ինչ հասկացանք՝ առանց խոսքերի: Բայց կարող եմ ուրիշների փոխարեն էլ պատասխանել, գուցե նրանք երկար էին սպասել այդ «նահանջ» հրամանին, իսկ ես մեկ վայրկյանում ամեն ինչ հօդս ցնդեցրի: Բայց չէ՛, նրանք կարող էին ուղղակի փախչել, չէ՞ որ արդեն տրվել էր հրամանը:

Փոխգնդապետը շարժումներիցս հետո պատասխանեց ռադիոկապին.

-Չկա մեկը այստեղ, որ նահանջի, դո՛ւք նահանջեք, մենք մնում ենք. ինչ ուզում է, թող լինի:

«Փաստորեն ստացվում է՝ ես դարձա սրա սկիզբը...»:

Շարունակեցի նայել դիպուկահարիս հրացանի օպտիկայից: Մտքումս մի բան էր պտտվում՝ «այս փոսը դարձավ իմ գերեզմանը», բայց չէի վախենում մեռնելուց. վաղուց էի սպասում այդ պահին, կարծես ողջ կյանքս էի սպասել, թեժ կռիվը դարձրել էր ինձ մահապարտ:

Երբ դու երիտասարդ ես ու տաքարյուն, բայց չգիտես՝ ինչ ես ուզում, դու կարողանում ես քեզ թույլ տալ ամեն մի արկածախնդրություն: Բայց ես չեմ ուզում գլխիս մոխիր ցանեն, ուզում եմ նոր հաղթանակներով ապրել ուժեղ երկրում: Պատերազմը ոչ միայն սպանում և խեղում է. այն իր համար վերափոխում է զինվորներին ու սպաներին, կոփում նրանց կամքը, բթացնում վախի զգացումը և, ընդհակառակը, գեներում ինչ-որ տեղ քնած ինքնապաշտպանական բնազդը մինչև սահմանը սրում: Իսկ առաջին մենամարտից հետո շատ մարտիկներ ուղղակի անճանաչելի են: Նրանք վերածվում են վտանգավոր ու զգոն գիշատիչների՝ պատրաստ մահացու կռվի... Ահա թե ինչպես է պատերազմը կերտում մարտական կերպար: Հակառակ դեպքում դա անհնար է: Կա՛մ գոյատևում ես, կա՛մ վիճակված է գլուխդ վայր դնել:

Հանկարծ մի պահ կտրվեցի աշխարհից. զգում էի, թե ուր որ է սիրտս կպատռի մարմինս ու կթռչի տեղից: Մտածում էի՝ վերջին հաղորդությունս ո՞վ կտա՝ քահանա՞ն, թե՞ հակառակորդը: Աչքերս ցավում էին արդեն, երկու օր էր՝ անշարժ պառկել էի, նայում էի դեպի հակառակորդը՝ փնտրելով իմ առաջին զոհին: Եվ հանկարծ թփերի միջից հայտնվեց թշնամու մարդատար մեքենան. պետք էր կրակել. ընդամենը մեկ կրակոցի հնարավորություն... Մի քանի մետր առաջ շարժվելուց հետո մեքենան կանգնեց. հասկացա, որ հաստափոր փամփուշտս հեշտությամբ գտավ վարորդի գլուխը: Բայց կարծես թե ոչինչ չի պատահել. այդ ես չէի՞, որ մի քանի վայրկյան առաջ խլեցի ինչ-որ մեկի կյանքը, ինչ-որ մեկի տղային, ինչ-որ մեկի հորը կամ ինչ-որ մեկի սիրեցյալին: Այդ պահին ոչինչ չէի զգում, միայն հետո հասկացա, որ կարող եմ ընդամենը մեկ փամփուշտով տապալել անծանոթի կյանքի նպատակը, երազանքները: Գուցե մի ուրիշ երկրում, մի այլ վայրում մեր հանդիպումը այլ կերպ ընթանար, բայց ոչ այստեղ: Դե փորձե՛ք, դո՛ւրս եկեք փողոց և առաջին հանդիպած անծանոթին սպանե՛ք, տապալե՛ք նրան. ի՞նչ կտա դա ձեզ: Ոչի՛նչ: Այստեղ գոյության պայքար է. չսպանեցիր դու, կսպանեն քեզ կամ քո ընկերոջը, և ոչ մեկը չի ուզում մահանալ, բոլորն ուզում են ապրել. մի՞թե կարող է այդպես լինել. պատերազմ առանց զոհի. կարծում եմ՝ մի քիչ ծանձրալի կդառնա կռիվը:

Հարձակումները շարունակվում էին. արդեն վեց ժամ էր անցել կռվի մեկնարկից, բայց դեռ վերջը չէր երևում: Փամփուշտներն էլ վերջանալու վրա էին. տվել էինք առաջին կորուստները: Հոգնել էի այս բեմից, ուստի որոշեցի մի քիչ հանգստանալ, նաև լավ առիթ էր օխելու: Մեր ձախ թևն ընկել էր թշնամու կատաղի կրակի տակ, փորձեցի բարձրացնել գլուխս՝ տեսնելու՝ ի՛նչ է կատարվում. քարացա, կանգ առավ ժամանակը...

Մի փոքրամարմին սերժանտ, կծելով շրթունքները, ձեռքերով ականջները ծածկելով, ձգվեց ակոսի խոռոչի մեջ: Նա ուզում էր սեղմվել կարծրացած, խոտածածկ հերկի մեջ, թաքնվել երկրի մեջ, որպեսզի չտեսնի կամ չլսի՝ ի՛նչ է կատարվում այժմ խրամատի շուրջբոլորը: Նրան նայելը սարսափելի էր: Ձեռքերը, դեմքը, կրծքավանդակը արյան մեջ էին: Աչքերը խելագարի էին, բաճկոնը՝ պատռված:

-Տե՛ր, մա՛հ ուղարկիր ինձ, Տե՛ր... ես այլևս ուժ չունեմ, չեմ կարող, մա՛հ ուղարկիր, խնդրում եմ, Աստվա՛ծ,- հեկեկալով շշնջաց սերժանտը, ապա ծնկի իջավ, աղոթելուց հետո ասաց.

-Արեցի, ինչ կարող էի, ավելի լավ է այնտեղ բոլորի հետ մեռնել:

Տղան, մի փոքր սպասելով, որսորդ գայլի նման շուրջը նայելով և կարմրի մեջ ոչինչ չտեսնելով, սողաց դեպի խրամատի եզրը: Նրա շարժումները դանդաղ էին, նրբագեղ, ինչպես կատուն է կամաց-կամաց մոտենում իր զոհին: Մի ձեռքում նա կարճ գնդացիր էր պահում՝ այն կրելով ինչ-որ անպետք փոքրիկ իրի պես, որը պարզապես ափսոսում էր դեն նետել: Այստեղից՝ թեք, համարյա աննշմար բլրի գագաթից, ամեն ինչ հստակ երևում էր: Մոտ մեկուկես կիլոմետր հեռավորության վրա էր. «Այլևս չկա, չկա նա»: Եվ այն, ինչ սերժանտը տեսավ, խոցեց նրա սիրտը: Բոցի լեզուները ճեղքեցին ծխի սև գալարուն այուները՝ խարույկի կայծերի խիտ ցրվածությունը շպրտելով դեպի խռոված երկինք: Սերժանտի սիրտը բաբախում էր, ձեռքերը դողում էին: Նա վեր թռավ և ուզում էր հոսանքով հոսել այնտեղ, բայց վախը խանգարեց նրան: Վերադառնալով կրկին կուչ եկավ գետնին, ատամներով փորեց ձեռքերը, խեղդեց կրծքից թռչող սրտաճմլիկ ճիչը: Ահա և սերժանտը երկար պառկում է՝ մանկամտորեն հեկեկալով, շնչում բլուրն ի վար սողացող սուր արյունից:

Կպչուն, սառը վախն ընկավ սերժանտի վրա: «Կապիտանն էր, որ սպանվեց». սարսափելի իրողությունը կայծակի պես այրեց նրան: Նա գնաց դեպի կապիտանը, որ պառկած էր դեմքով վեր, ապակե բաց աչքերը արտացոլում էին կապույտ երկինքը: Թեքվեց նրա վրա՝ ուշադիր զննելով դեմքը: Երկու փամփուշտ խոցել էր կուրծքը: Նա արնահոսում էր, միևնույն ժամանակ հանգիստ ու անքթիթ հայացքով նայում էր սերժանտին, բայց սերժանտը, լիզելով չորացած շուրթերը, փորձում էր օգնություն ցուցաբերել արդեն մահացած հրամանատարին: Նա պինդ սեղմեց թաշկինակը կապիտանի վիրավոր սրտին՝ ատամներով բռնելով վիրակապի մի ծայրը: Փորձեց արձակել բաճկոնի կոճակները:

-Խուճապի մի՛ մատնվիր, հրամանատա՛ր, ես ամրացրել եմ վիրակապը, ինչպես կարող էի: Մենք պետք է օգնություն կանչենք, հակառակ դեպքում դուք ողջ դուրս չեք գա:

Կապիտանը լուռ էր:

-Որպես Ձեր զինվոր՝ ես Ձեզ հրամայում եմ. Դուք պետք է ապրեք, հիշե՛ք ձեր նշանածին, ինչո՞ւ եք նրան ևս դժբախտացնում: -Հրամանատա՛ր, - շշնջաց սերժանտը՝ թեքվելով նրա վրա և փակելով աչքերը, - ես երբեք ուժեղ գործեր չեմ արել, միշտ նախանձում էի նրանց, ովքեր կարող էին իրենց թույլ տալ դրանք, և հիմա պետք է Ձեզ ձեռք մեկնեմ:

Սերժանտը բռնեց կապիտանի ձեռքն ու սեղմեց. դեմքին անառողջ կարմրություն հայտնվեց. ծանր շնչում էր: Այնուհետև զգաց նրա ափի մարող ուժը: Հետո...հետո նրանց մարմիններին հասցված ուժգին պայթյունը նրանց օդ հանեց՝ մեկ մետր վեր շպրտելով, պայթեց ներքևի թիթեղյա ճողվածքը, շրջեց այն և արյունոտ խառնաշփոթ շաղ

տվեց: Երկուսն էլ ընկան գետնին. դրանից հետո՝ ևս մի պայթյուն. հարվածային ալիքը կտրուկ դիպավ դեմքին, խրամատը ծածկվեց ծխով: Սերժանտի գանգի կեսը ջախջախվեց, ձեռքերն ու ոտքերը կոտրված էին: Մարդկանց ձայները ոչ մի տեղ չէին լսվում, միայն հեռավորության վրա ինչ-որ տեղ գնդացիրները միապաղաղ խփում էին: Ընդամենը մեկ վայրկյան: Թերևս ավելի քիչ: Նրանք խեղված էին ու այսուհետ արժանի միմյանց: Ամեն ինչ այլևս իմաստ չուներ: Նախկինը գոյություն չուներ: Նա՝ անցյալը, մնաց մեկ այլ հարթության մեջ, որտեղ ամեն ինչ հիշվում է, ասես ձայների արձագանք՝ ջրի սյան միջով: Այն ամենը, ինչ տեղի ունեցավ հետո, կապված էր երկուսի հետ: Սերժանտը իրեն կապեց նրա հետ այնքան ամուր, որքան կապանքները կարող էին փորել մարմինը՝ թողնելով արյունոտ հետքեր: Նրանց սպանելն անհնար էր, նույնիսկ եթե դա հանգեցրեց նրանց երկուսի մահվանը:

Գործողություն կատարելիս անորոշությունը ձախողման բանալին է: Անհայտի մեջ մտնելն ավելի սարսափելի է, քան մահվան գնալը, քանի որ կանխավ իմանալով վտանգի մասին՝ ելք կփնտրես դրանից խուսափելու: Անակնկալը որոնման ժամանակ չի թողնում:

Այսպիսով, մենք գնացինք առաջ, յուրաքանչյուրս յուրովի ընկալելով հանգամանքները: Բայց մեր մտքերը տարբերվում էին միայն նրբերանգներով:

Ես անմիջապես արձագանքեցի այս դրվագին՝ նպատակ դնելով և ինքնաբերաբար սեղմելով ձգանը: Ես ինքս մռնչում էի, գոռում զգացմունքների ու հույզերի ավելցուկից, բայց իմ լացը խլացրեց մարտական ոռնոցը: Մենք բոլորս կռվել ենք դժոխքի մեջ: Ես վաղուց այնքան չէի վայելում մենամարտը, որքան այս անգամ: Իհարկե, զգացմունքները թունդ էին դառնում նրանով, որ քանի դեռ մենք ողջ էինք, թշնամիներն ավելի ու ավելի էին պակասում: Փամփուշտները սուլում էին ու ճռռում շուրջս՝ փորփրելով խրամատի քարացած կավե պատը: Մոտեցող կրակի ուժգնությունն արագորեն մեծացավ, և ես բնազդաբար հասկացա՝ ինձ մնացել է ընդամենը մի քանի վայրկյան…

Ինչ-որ բան այն չէ… Տարիների ընթացքում մշակված ներըմբռնողականությունս բղավում էր՝ հորդորելով զգույշ լինել: Ես և ընկերս հայացքներ փոխանակեցինք, նա մի փոքր ձախ էր կանգնած, նրա աչքերում տարակուսանք կարդացի. նա ևս կարծես զգաց վերահաս վտանգը, բայց չկարողացավ որոշել՝ որտեղի՞ց է գալիս:

-Հե՛տ գնա,- բղավեցի՝ արդեն հստակ գիտակցելով, որ ուշացել եմ: Երկուսս գրեթե միաժամանակ ցատկեցինք խրամաբջիջի մեջ, շարժման մեջ ինչ-որ տեղ լսեցի կարճ պոռթկում: Գլուխս հուսահատ շրջեցի չորսբոլորս՝ չհասկանալով՝ որտեղի՞ց են մեզ վրա կրակում: Ինչ-որ մոլուցք կար. կարծես օդն ինքն էր կրակում մեզ վրա: Ես մատս սեղմեցի ձգանին, մինչև որ սկսեց ցավել՝ ինքնաձիգս շարժելով բոլոր ուղղություններով: Հաղթանդամ ընկերս, ուսից բռնած, ընկավ փոսի մեջ: Տեսա՝ արյունը կաթում էր նրա մատների արանքից: Գլուխն այրվել էր, արյունն արագ հեղեղում էր աչքերը՝ թափվելով հոնքերի միջով: Պառկած գետնին, արմունկներին հենվելով՝ սողաց կողքի: Մի բեկոր էլ վիրավորել էր ազդրը, մյուս ոտքն էլ առատորեն թաթախված էր արյամբ: Եվ հետո նորից շատ մոտ՝ համարյա ականջիս վերևում, մի կրակոց հնչեց, և նա մեջքով ծանր ընկավ գետնին, ծոծրակով հարվածեց քարին և մնաց անշարժ… Ես լսեցի խեղդված հառաչանք:

Ճյուղերի արանքից ցատկում էր ինչ-որ թռչուն. քամին ցնցում էր, ասես տերևների երակներից բռնած՝ մարդու հոգին էր ցնցվում: Արևը նրբորեն շոյեց դեմքս, բարձրացրի գլուխս և փակեցի աչքերս: Մի որպես արևը փայլեց՝ կյանք բերող լույսը: Եվ այդ պահին, երբ բացեցի աչքերս, աստղերն անջատեցին, լսվեց ծակող սուլոց թե մռնչոց, կարծես քար ընկավ իմ ջրի մեջ: Կտրելով երկնքի խավարը՝ սպիտակ աղավնին՝ «փամփուշտը», վեր թռավ: Ոտքերս տեղի տվեցին, թշնամու փամփուշտը դիպավ ճակատիս: Արյունը կաթկթեց գետնին, գրեթե ոսկեգույն խոտի վրա՝ չորացած փնջերով: Այտերովս կարմիրը շարունակում էր հոսել, ողողել հողը, բայց ես չէի զգում, ընդարմացած նայում էի, միայն երբ գրեթե լիովին ուժասպառ եղա, գետնին ընկա: Շնչառությունս ծանրացավ: Երկար, անլուր հառաչանքը բարձրացավ սրտիցս:

Ինչ-որ բան է մոտենում՝ դեռ անանուն ու ահեղ, որը կփրկի ինձ այս տանջանքից ու ցավից: Դա տևեց մի պահ և նման էր ցավալի, կիսախելագար երջանկության: Եվ ես նորից ցնցվեցի՝ ոտքերս գետնին խրելով, ձեռքիս՝ հրացանը, իսկ մտքումս փամփուշտի պես ներկառուցված կախարդանքը:

Ընկա, պառկեցի փորի վրա, դեմքս թաղեցի չոր հողի մեջ, բայց ինձ համար ցավալի ու անհարմար էր երկար պառկել: Վերևում, կրակի հետք թողնելով, բզզոցով ու սուլոցով հրթիռներ նետվեցին, փամփուշտները կանաչ ու կարմիր սլաքների հետագծով նկարեցին երկնքի պաստառին: Ներքևում ծխի ու այրման հիվանդագին, հեղձուկ հոտ էր: Այրված հողը դեռ ագահորեն ըմպում էր արյունս: Մի քանի վայրկյան, և կողջունեմ… արդեն դուրեկան դարձող մեծ հանգիստը: Իմ դիրքում դա նույնիսկ գաղթակղիչ է, քանի որ ինձ միանգամից կազատի բոլոր տառապանքներից: Բայց մյուսները կապրեն: Նրանք կհաղթեն, կպաշտպանեն այս կանաչ, երջանիկ երկիրը, խորը կշնչեն, կաշխատեն, կսիրեն: Բայց այժմ նրանք նայում են, թե ինչպես է այս ճանապարհին զոհվում վաշտի քսաներկուամյա դիպուկահարը: Արյան հետ բերանիցս դուրս եկան նաև վերջին խոսքերս, որոնք մի կերպ արտաբերեցի:

Մարմնիս տակի սև գորգը կարմրով ծածկվեց և հանգստացավ. ասես մրսել էր աշնանային գիշերվա զով քամուց, և իմ արյունն էր պետք, որ նրան տաքացներ:

-Ա՛ռ, վերցրո՛ւ արյունս, ամբողջովին քոնն է:

Կամ գուցե հողի տակից մի վարդ էր ուզում դուրս գալ, և իմ արյունն էր պետք նրան ջրելու, կյանք պարգևելու համար:

-Ա՛ռ, վերցրո՛ւ արյունս, ամբողջովին քոնն է: Թող արյունս սպեղանի լինի քո վերքին, որ երբ ծարավես, խմես, որքան կամենաս և չկշտանաս:

Ես ընդամենը քսաներկու տարեկան էի և միանգամայն հավատում էի իմ իսկ անմահությանը: Պարզվեց՝ անմահությունը կարճ է: Մահը գալիս է այնտեղ, որտեղ մոռացվում է, բայց ես հիշում էի նրան:

Անշուշտ, աշնանային օրեր կան՝ այնքա՜ն բյուրեղային, որ դրանց թափանցիկությունը սահմանվում է ցավի հետ: Եվ այս օրերին ճառագայթների զարդերն այս ցավը դարձնում են քաղցր, անչափ քաղցր ու սառը, այնքան քաղցրորեն հովացնող, ինչպես սթափությունը երկար, բռնի հարբեցողությունից հետո: Վերջապես սիրուց արբած կյանքս անցավ, իր մասին երազած աշունն էլ անցավ, և շուտով ձմեռն ինձ կծածկի սպիտակ մշուշով:



ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԳՍՅԱՆ

***

Զմրուխտյա հեռուն ու լույսն արևի
Ձգում եմ անդուլ ամեն առավոտ:
Դիմացս շղարշ՝ պինդ ու անթափանց,
Ինձ վանդակել են հաղթի կարոտով:

Բայց ես դոփում եմ, դոփում եմ տեղում՝
Խոսքերս անիմաստ, քայլերս անզոր,
Պարտության ցավից տնքում է հոգիս,
Ինչպես ջախջախված մի հեծելազոր:

***

Ամպը իջավ սարից,
Աչքիս լույսը փակեց,
Աշնանային մի ցավ
Հոգուս խորքում ծաղկեց:

Աշունը սև հագավ,
Հետն էլ նոր ցավ բերեց,
Երբ թշնամին վայրագ
Հողից մի թիզ պոկեց:

Ցավոք, լռեց Աստված…
Աշխարհն էլ աչք փակեց,
Ցավը՝ մահից դաժան,
Հոգուս դուռը թակեց:

***

Եռագույնները իջել են բարձունքներից,
Եռաբլուրում շարվել են խոնարհ,
Գունատ են, հոգնած ու լուռ.
Անցել են արյունոտ ճանապարհ:

Եռագույնները վերադարձել են
Ու դարձել հայ կանանց թաշկինակ,
Արյունոտված են, բզկտված,
Կորցրել են խինդ ու հաղթանակ:

Բոցաշունչ գույները գողացել են,
Թողել են միայն ողբ ու կսկիծ,
Խամրած երանգներից կաթկթում են
Արյուն, արցունք ու թախիծ:

Եռագույնները վերադարձել են.
Բարձր սարերից իջել են վար,
Խոնարհ են, չեն ծածանվում,
Լուռ են, տխուր ու խնկահար:

ԽԵԼԱՌ ՔԱՄԻՆ

Այս պաղ քամին, այս խենթ քամին
Ո՞ւր է ուզում ինձ տանել,
Փետուրի պես առել թևին
Ամպերին է ինձ խառնել:

Մեկ քաշում է խորքն անդունդի,
Հետո հանում սարն ի վեր,
Վառվռում է հոգուս խորքում,
Խառնում մազերս ալեհեր:

Տանում է ինձ մութն անթափանց,
Մեկ էլ խփում ժայռերին:
Ա՜խ, այս քամին, այս խենթ քամին՝
Ոսոխ սրտիս ցավերին:

***

Աշուն եկավ, մուսան՝ հետը,
Հորդ անձրևը լցվեց գետը,
Դեղին հագան դաշտեր ու ձոր,
Դեղնեց հոգուս արահետը:

Մշուշ, եղյամ իջան սրտիս,
Ձեռքս առա թուղթ ու գրիչ,
Աչքիս եկավ մարտ ու կռիվ,
Պատերազմը այն ավերիչ:

Նորից մայրս եկավ այցի,
Հեքիաթ պատմեց ինձ մանկական,
Հայրս եկավ խստաբարո՝
Խրատներով ավանդական:

Քնած սիրտս զարթնեց նորից,
Այցի եկավ մուսաս ծարավ,
Կըռ-կըռ կանչով հեռանում են
Կռունկները դեպի հարավ:

ՑԱՎԸ ՄՆԱՑ

Մի ցավոտ լուր քամու հետ
Եկավ մտավ իմ այգին,
Իրար խառնեց ծառ ու թուփ,
Նստեց վարդի թերթերին:

Կռիվ տվեց տանս մոտ,
Սողաց դռան արանքից,
Մտավ սիրտը իմ կարոտ,
Չխնայեց նաև ինձ:

Կպավ հոգուս լարերին,
Հոգիս քնից արթնացավ,
Ցավը թողած սրտիս մեջ՝
Քամին անցավ, հեռացավ:

ՄԻ ՊԱՀ

Օրը մթնեց. մթության մեջ
Քեզ հիշեցի ես մի պահ՝
Որտե՞ղ ես դու, ի՞նչ ես անում,
Ո՞ւմ գրկում ես դու հիմա:
Սերս պոկիր, ցավը մնաց,
Ծով կարոտով թողեցիր,
Լույսը տարար, մութը մնաց,
Վերջին հույսս էլ մարեցիր:
Կամաց-կամաց օրը ցրտեց,
Պաղ գիշերն է մոտենում.
Քանի գնում, քանի մթնում,
Ավելի եմ կարոտում:

Վաղուց արդեն կեսգիշեր է,
Երկինքն արդեն լուսնկա:
Իմ կարոտի տառապանքին
Մութն ու ստվերս են վկա:
Մեղմ փչում է գարնան քամին,
Աստղիկներն են պսպղում,
Ամեն ընկնող աստղի մեջ
Իմ կորած սերն եմ փնտրում:
Բայց դու վաղուց ես հեռացել,
Դու էլ չկաս, չես էլ գա,
Այսօրվանից ատում եմ քեզ,
Թեկուզ կոչես սրիկա:

***

Փորձում ես անթել
Ու քոռ ասեղով
Կարկատել սրտիս՝
Քո իսկ պարգևած
Սպիները ծեր
Ու մռմռում ես
Ինչ-որ մի հին երգ:

Զուր են քայլերդ,
Սուտ ու ապարդյուն,
Կա՛նգ առ, սիրելի՛ս.
Ամեն ծակելուց
Հալումաշ սրտիս
Դու հավելում ես
Եվս մի նոր վերք:

ՍՐՏԻՍ ՔԱՐԸ

Տարիներ առաջ մի ապառաժ քար
Եկավ թաքնվեց իմ սրտի խորքում
Ու ամեն անգամ, երբ գլորվում էր,
Սրտիս ցավերն էր սիրով բորբոքում:

Սիրում էի նրան, պահում, գուրգուրում,
Նա էլ իմ սրտին վահան էր դարձել,
Ճիշտ է, մաշվել էր բյուր հարվածներից,
Բայց ես նրանից դեռ չէի ձանձրացել:

Շատ ծանր էր քարը՝ բազալտից ամուր,
Ինձ հետ քնում էր, ինձ հետ արթնանում,
Թե խնջույք լիներ կամ թեժ մենամարտ,
Ես սիրով նրան ինձ հետ էի տանում:

Ես էլ քարի պես ամուր էի դարձել
Ու դիմանում էի ամեն հարվածի,
Մենք միասին էինք ցավ ու խինդ կիսում,
Երգերս էլ գիտեր նա բերանացի:

Բայց աշնան մի օր էլ չդիմացավ.
/Հզոր հարված էր, ուղիղ թիկունքից/,
Քարս մանրացավ ու դարձավ մոխիր,
Երբ մի քար պոկվեց իմ հայրենիքից:

ՄԻՇՏ ՊԱՏՐԱՍՏ

Խրամատում լռություն է.
Թշնամին է սողում առաջ,
Ինքնաձիգդ ամո՛ւր պահիր,
Ձգոն, ուշիմ, զինվո՛ր իմ քաջ,
Եղի՛ր խիզախ, անվախ, արի,
Որ այս կռվին շուտ դնենք վերջ:
Աչքը կարոտ քո ճամփեքին
Քեզ է սպասում քո մայրը խեղճ,
Քեզ են սպասում սիրած աղջիկ,
Քո տան շեմը հայրենական,
Պատրա՛ստ պահիր կամք,
ինքնաձիգ,
Հույս ու հավատ, փամփուշտ,
ական,
Առյուծ դարձի՛ր մարտի դաշտում,
Թե հարկ լինի, կյանքդ էլ տուր,
Հողդ սիրի՛ր քո մոր նման,
Մի՛ թող մնա երբեք թափուր:
Մի՛ թող խնդա նենգ թշնամին,
Պատրա՛ստ եղիր դու միշտ մարտի,
Որ պայքարը մեր փառապանծ
Հաղթանակով միշտ ավարտվի:

«ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ ՏՈՂԸ ՑԱՎԻ ՆՄԱՆ…»

/Արա Գևորգյան, Մեր քանդված եկեղեցիներին, «Հարյուր արցունքաթել Անուշիկիս»/

«Մեռոնաբույր բալիկներին, որ գնացին ու հետ չեկան…»:

Արա Գևորգյան

Արա Գևորգյանի «Մեր քանդված եկեղեցիներին» ժողովածուն տպագրվել է 2002 թվականին: Գիրքը ծաղկաքաղ է և ընթերցողին ներկայանում է ներքին բաժանումներով՝ շարքերով: Մեր անդրադարձը դրանցից միայն մեկին է՝ «Հարյուր արցունքաթել Անուշիկիս» խորագրով՝ նվիրված հեղինակի դստերը, որ 1988-ի երկրաշարժի անմեղ զոհերից է:

Եթե որոշ բանաստեղծություններ թվագրված չլինեին, ապա անտարակույս կարելի էր շարքը մեկ ամբողջություն՝ պոեմ համարել՝ ցավի, հուսահատության, հույզերի ու ապրումների, իրականի ու ողբերգականի մի խառնարան, որտեղ իրապես իշխողը ցավն է, կորստի՝ բնավ հաշտեցում չհանդուրժող ցավը:

Գրողը տարիներ անց էլ չի կարողանում հաշտվել զավակի կորստյան՝ անհավանական թվացող մտքի հետ, որ մարդկայնորեն ճշմարիտ է, և ապրումի ու ցավի գրականությունը գալիս է միայն որպես փրկության սարսուռ: Զգայուն տողեր են, ասես ձոն դստեր կյանքի բոլոր բեկումնային իրադարձություններին. «Երազումս քեզ հարսնացու դարձնեմ»,-դիմում է նա դստերը, կամ՝ «Մանուկներն են լալիս իրենց բախտի համար»,-տող, որ գուցե ամենից ավելի է ընդհանրական և ամենից ավելի է բնորոշ այդ օրերին: Իրականության ու ողբերգության համաձույլ՝ սարսափելիորեն խոսուն՝ անձնական ու անանձնական ողբերգությունն է:

Էջերը նաև համապատկերլուսանկարներով են՝ կրկին այդ օրերից մնացած և այլևս միայն այդպես մնացած՝ աղետին հաջորդող մարդահամարից առաջ:

Ընդհանրապես՝ հեղինակի խոհերը գնում են դեպի երկինք՝ թե՛ ուղղակի, թե՛ անուղղակիորեն ակամա կապվելով վիրավոր եկեղեցու հետ: Սա նաև ինքնահատուկ աղոթք է առ Երկինք և առ մանկան անմեղ-անմարմին հոգին: «Ձյուն է գալիս, իսկ սահնակը Անուշիկիս // Փակված է խուլ ներքնահարկում»,-մորմոքում է բանաստեղծը:

Իսկ հետո. «…Սատանայի քմծիծաղ է հայելիս»,-գրողը անզոր է նաև հայացք նետելու սեփական վշտի աչքերին: Միով բանիվ՝ սա որդեկորույս հոր ծովացած ցավի երգն է: Եվ իհարկե՝ գագաթը ցավի՝ մերթ իր լինելուց շատ է ամաչում, մերթ էլ՝ զարմանում է, որ ապրել է ուզում:

Ապա խորին հուսահատությունն է իջնում, որ դեռ երկար տարիներ անց էլ չի փորձում հավաքել փեշերը, և կրկին խոսքը միայն անձնական ցավի մասին չէ. մեծ վիշտը սահուն հագնում է քաղաքի հանդերձը, և ծավալվելով խորանում են իրական տեսիլները՝ դառնալով ընդհանրական: «…Եկեղեցին… // Պատառոտված վերքը բացված // Կարծես հրեշ լինի հսկա // Եվ քմծիծաղ աստծու հանդեպ»:

Թվում է՝ սեփական երկատված հոգու բացահայտումն է նաև գրքում. հեղինակը մերթ մաքուր հավատացյալ է, այնքան, որ սրբացած զավակին միայն «աստվածային» մակդիրներով է կոչում, մերթ էլ՝ որպես բողոք ծառանում է Վերինի դեմ, իբրև բողոք՝ սեփական ցավի ու ճակատագրի համար, որ միայն իրենը չէր:

Ուշագրավ է առկա հակադրամիասնությունը, որ առաջին հերթին հոսում է բնական հունին զուգահեռ՝ մի կողմից՝ կյանքը շարունակվում է, մյուս կողմից, ինչպես երևակում է հեղինակը, բոլոր որդեկորույս մայրերի աչքերում հանդարտ բարակող արցունքաթելեր են և ուրիշ ոչինչ…

…Ապա մեծ ցավի վրա ծորում է մի սիրուն հեքիաթ՝ փոքրիկ, ծվարած գյուղական մի կյանքի, մի եղբայրիկի և այլևս լուսանկար մնացած քրոջ մասին: Հովվերգական պատկերները միահյուսվում են իրական-ողբերգականին, և ամենը երազ է թվում, որ պիտի զարթնող լույսի հետ չքանա-անէանա՝ վերադարձի հարությունը պարգևելով բոլոր գնացածներին՝ նրանց հավերժ սպասողների անսփոփ տառապանքին ի տրիտուր:

Կարինե ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Բան. գիտ. թեկնածու, դոցենտ

***

Թո՛ղ աղոթեմ… Լույսը մոմի
Հին դարերի շունչն է մաքուր,
Ինչ-որ մեկը՝ ինձ անծանոթ,
Եկել է ու սիրտս է թակում...
Թող աղոթեմ... Լույսը մոմի
Ցավերս է խոր ամոքելու,
Ինչ-որ մեկը՝ ինձ մոտ կանգնած,
Եկել է, տե՛ս, ինձ փրկելու...
Թող աղոթեմ… Լույսը մոմի
Աննկատ է միշտ էլ մարում,
Աղոթքը խիղճն է մարդկային,
Որ իրեն չի ծափահարում...

***

Աստվածային տերևաթափ՝
Աշունն է եկել,
Մոլեգնում է սիրտս անհաշտ,
Հոգիս է լռել:
Սերը՝ դարձել իրիկնահաց,
Մերվել է իմ մեջ,
Շողշողում են աստղերը տաք՝
Աշունն է եկել:
Կարծես ծառ եմ ես
պարտեզում,
Դեղնել եմ սիրուց,
Պարտիզպանը տերևներից
Խարույկ է դիզում,
Բոցկլտում է կրակն անհագ
Իմ հեգ պարտեզում,
Տերևաթափն աստվածային
Խարույկն է լիզում:

***

Աշունն արդեն դեղին ու կարմիր
շաղախ է դարձել,
Եվ տերևների բույրը՝ բնական
մահն է աշխարհի,
Որ սիրում է միշտ
հանգչել մի խաղաղ
օրհնաբանությամբ՝
Լուռ սոսափյունի խորհուրդի
ներքո:
Կա մի երազանք
և վերին թախիծ
Այդ հանգիստ և պարզ
տերևաթափի
անդորրության մեջ...
…Աչքերս փակած…
զգում եմ արդեն՝
Ինչպես առաջին
փաթիլները ձյան
հալչում են դանդաղ
իմ ափի մեջ բաց:
Եվ վերջանում է խոր
առասպելը իմ աշնանային:

***

Նախնիներից մաքուր
Բանաստեղծի ոգին
ես վերցրի թաքուն
և տողեր եմ մոգում...
Հրդեհներից ծնվեց
պարսը իմ տողերի
և հողմերից ծագեց
ներշնչանքը բերրի:
Օ՜, իմ Մշո երգեր՝
պապերիս տաղարան,
տատասկների փշեր,
հուշերի քավարան…
Գաղթի ճամփին երկար
անտեր և անդարման
«Քելե՛, լաոն» երգեց
պապս անօթևան…

Նախնիներից մաքուր
Իմ տողերն են սերվել,
ես տողեր եմ մոգում,
որ Մուշից են բերվել...

***

Գիշերն արդեն եկավ,
Պարզություն է թորում
Գույներով իր սառած...

Եվ աստղերը թելկապ
Երկինքն են օրորում
Շուրջպարի մեջ առած...

Տիեզերքը անդեմ
Սավառնում է վստահ
Եվ ստանում անուն:

Մութ խավարն էլ արդեն
Տանիքներին նստած
Հեքիաթներ է մանում:

***

Հանգիստ մենակություն
փողոցներում մթին,
մեղմություն է նստել
նուրբ երազի այտին:

Հոսող ջուրը կարծես
ժամանակ է մանում,
խավարի մեջ սահուն
կորցրել եմ հասցես:

Հեռուները՝ դառնում
անորսալի լեգենդ,
հեքիաթի մեջ շքեղ
լուսինն է թև առնում:

Հանգիստ մենակություն
փողոցներում մթին,
մեղմություն է նստել
նուրբ երազի այտին:

***

Իմ մեռնո՛ղ հավատ,
դու ե՞րբ ես այսքան
Հուսահատություն
և ցավ ճաշակել,
Եվ երբ են խղճիդ վրա
քանդակել
Անտարբերություն,
անհեթեթություն
և տարակուսանք...
Եթե մեռնում ես,
ո՞վ կհասցնի
քեզ կենդանի ջուր,
Որպեսզի նորից
դեմքդ ցոլանա
ժպիտով մաքուր...
Իմ մեռնո՛ղ հավատ,
վե՛ր կաց մոր նման
Եվ թաքուն օրհնի՛ր
զավակիդ ճամփան...

***

Եվ նորից ես դու տխուր
Հեռուներում անդարման,
Սիրտդ կամուրջ է դարձել,
Սիրտդ դարձել է սահման:

Կուզենայի քեզ տեսնել
Մայրամուտի մշուշում,
Քամին կտուրն է թառել,
Քամին արցունք է հուշում:

Կուզենայի քեզ տեսնել
Երազիս մեջ թափանցող,
Արցունքներդ՝ մրսած ցող,
Հողին տաք սերմ են դարձել:

ՀԳՄ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑԸ ԳՅՈՒՄՐԻ

Նոյեմբերի 8-ին ՀԳՄ պատվիրակությունը ՀԳՄ նախագահ Էդվարդ Միլիտոնյանի գլխավորությամբ հանդիպեց Գյումրի համայնքի ղեկավար Վարդգես Սամսոնյանի հետ: Հանդիպմանը ներկա էին Գյումրի

համայնքի ղեկավարի գլխավոր խորհրդական Հայկ Սուլթանյանը, Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային մասնաճյուղի նախագահ Անդրանիկ Կարապետյանը:

Վարդգես Սամսոնյանն իր խոսքում կարևորեց գրողների միության աշխատանքը Հանրապետության ողջ տարածքում, մասնավորապես՝ ընդգծեց կառույցի աշխատանքը Գյումրիում: Համայնքապետը պատրաստակամություն հայտնեց հետագա համագործակցության և ունեցած հնարավորությունների շրջանակներում դարձյալ աջակցություն ցուցաբերելու մասին:

Էդվարդ Միլիտոնյանը շնորհակալություն հայտնեց Վ. Սամսոնյանին ընդունելության համար, խոսեց Գյումրու մշակութային ու գրական կյանքի մասին, առանձնացրեց Գյումրու համայնքապետարանի հետ մինչ այս իրականացված ծրագրերը, ՀԳՄի աշխատանքներում գյումրեցի գրողների ներառվածությունը, ապա անդրադարձավ համայնքապետարանի հետ շարունակական համագործակցությանը:

Այնուհետ Էդ. Միլիտոնյանը աշխատանքային հանդիպում ունեցավ ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքը ներկայացնող ՀԳՄ անդամների հետ: Քննարկվեցին գրական, ստեղծագործական և կազմակերպական հարցեր առաջիկա ծրագրերի և գրահրատարակչության (գրական անթոլոգիաներում ստեղծագործություններ ներկայացնելու) վերաբերյալ:

Էդվարդ Միլիտոնյանը պատասխանեց շիրակցի գրողներին հուզող հարցերին և հորդորեց նրանց ակտիվորեն մասնակցել տարեվերջյան գրական մրցանակաբաշխություններին:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԳՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Օրերս Գյումրու տնտեսագիտական վարժարանի գրասեր աշակերտներն այցելեցին Հայաստանի գրողների միություն Շիրակի բաժանմունք՝ ծանոթանալու ժամանակակից գրողների հետ: Հանդիպումը ճանաչողական-ուսուցողական էր, անշուշտ նաև՝ մոտիվացնող, քանի որ անմիջական շփումը գրողների՝ Անդրանիկ Կարապետյանի, Շնորհիկ Շահինյանի, Լուսինե Աղաջանյանի և արցախցի բանաստեղծ Ռոբերտ Եսայանի հետ, նրանց ոգևորող խոսքը լսելը, ստեղծագործությունների ընթերցումն ու վերլուծությունը լավագույնս կարող են ազդել նոր սերնդի և՛ լեզվամտածողության, և՛ գեղագիտական ճաշակի ձևավորման վրա: Ըստ էության՝ վարժարանի ուսուցչուհի Անժելա Մանուկյանին այսօրինակ հանդիպումների կազմակերպման առումով ևս հաջողվում է կոչմանը հավատարիմ մնալ:

Առհասարակ գրական բաժանմունքի աշխատանքները հետաքրքրում են ոչ միայն ուսանողներին, այլև դպրոցահասակ ընթերցողներին:

Ուշագրավ էր նաև Գյումրու թիվ 23 դպրոցի աշակերտների հանդիպումը բանաստեղծ Անդրանիկ Կարապետյանի հետ, որը գեղարվեստական մոտեցմամբ պատասխանեց նրանց հուզող հարցերին, ապա դպրոցի գրադարանին նվիրեց իր «Գլուխկոտրուկներ» գիրքը և «Եղեգան փող» թերթի համարներից:

Դեկտեմբերի 13-ին Շիրակի մարզային գրադարանում տեղի ունեցավ հանդիպում Տիգրան Նիկողոսյանի հետ: Հանդիպմանը ներկա էին Շիրակի մարզային բաժանմունքի մի խումբ գրողներ, մասնակցում էին վարժարանի սաներ, Գյումրու բժշկական քոլեջի և Մենեջմենթի համալսարանի ուսանողներ:

Տիգրան Նիկողոսյանը Հայաստանի վաստակավոր լրագրող է, հրապարակախոս, գրող:

Գեղարքունիք աշխարհի հյուրին ողջունեց Շիրակի մարզային գրադարանի տնօրեն Գևորգ Ամիրյանը, այնուհետև լրագրող գրողին ներկայացրեց բանաստեղծ, ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքի նախագահ Անդրանիկ Կարապետյանը:

Տիգրան Նիկողոսյանը գրադարանին գրքեր նվիրեց, այնուհետև պատմեց իր լրագրողական գործունեության, ստեղծագործական ձեռքբերումների մասին, խոսեց իր կյանքում տեղի ունեցած հետաքրքիր հանդիպումներից ու դիպվածներից: Շիրակի մարզային գրադարանի փոխտնօրեն Գեղեցիկ Գևորգյանը ընդգծեց ընթերցող-գրող նմանօրինակ փոխհարաբերության կարևորությունը:

Հանդիպումն անցավ երկխոսության և մտքերի փոխանակման աննախադեպ ջերմ մթնոլորտում:

Նունե ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԱՐՎԵՍՏԻ ԻՄԱՍՏ ՈՒ ԱՐՎԵՍՏԱԳԵՏԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

ԿԱՐԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՁՐՈՒՅՑԸ
ԳԱԳԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՀԵՏ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ 70-ԱՄՅԱԿԻՆ

ԿԱՐԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ - *Հարգարժա՛ն պարոն Հովհաննիսյան, կարծում եմ՝ ամենևին էլ պատահական չէ, որ ձեզ հետ ծանոթանում եմ Ձեր իսկ արարած գրականության միջոցով: Հավատացնում եմ՝ այս գործում առաջնային դերը թե՛ իմ, թե՛ Ձեր մասնագիտական ուղղվածությունն է: Եվ կարելի է, պարզապես, ձևով հարցազրույցը սահունորեն վերածել զրույցի՝ ավելի անմիջական ու ավելի գեղարվեստական: Իսկ հատկապես Ձեր «Վերջին պատվիրանը» մղում է բացահայտելու շատ ու շատ բաներ՝ վեպը հայտածելով մեր օրերի իրականության և՛ պարզ, և՛ անբացատրելի էջերին: Ուստի և առաջին հարցս. «Ի՞նչ է կատարվում»:*

ԳԱԳԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ - Մարդկությունը բնական կենսատիրույթից իրեն տեղափոխել է կործանարար տարածք, պատկերավոր ասած՝ բանականության տիրույթից արատների տարածք: Փլուզվում է այն արժեհամակարգը, որն արդեն ի զորու չէ ապահովելու մարդկության առաջընթացը: Կարելի է արձանագրել, որ այդ ընթացքը կանգ է առել: Այդ դադարը կարող է հանգեցնել տնտեսական, մշակութային, բարոյական քաոսի և դառնալ վարքաբանական ագրեսիայի սանձազերծման պատճառ, ինչն էլ հենց կատարվում է վեպում: Այսինքն՝ աշխարհը կանգնած է գլոբալ փոփոխությունների անհրաժեշտության փաստի առաջ և աննկատ դառնում է անկառավարելի: Տեսեք, թե ինչ տեղի ունեցավ Արցախի հետ. դա քաղաքակրթական խայտառակություն էր: Քաղաքակրթական ոճրագործություն: Մեծ անարդարություն: Ու ոչ ոք ծպտուն չհանեց: Խայտառակության ու ոճրագործության նմանատիպ օրինակներով լցված է այսօր աշխարհը: Այո՛, հասունացել է, Բեռնարդ Շոուի բնութագրմամբ, այս «կասկածելի քաղաքակրթության» վերահիմաստավորման, վերաարժևորման պահը: Ընդհանրապես, անցումային կոչվող շրջանը բոլոր ժամանակներում առանձնացել է որպես անասնական կրքերի սանձազերծման, անարդարությունների, այլևայլ արատների արմատավորման, իրավական կատարյալ նիհիլիզմի հաստատման ժամանակաշրջան: Ու այն շարունակվում է: Այս իմաստով, «Վերջին պատվիրանը» վեպի գործողությունները կարող էին տեղի ունենալ աշխարհի ցանկացած երկրում, ցանկացած ժողովրդի հետ:

Կ.Մ. – *«Ամեն մարդ արդարության չափման իր մետրն ունի»,- Ձեր խոսքերն են: Ասացեք, իսկ ո՞րն է Ձեր մետրը. ի՞նչ է արդարությունը, նաև ազատությունը, որպես գաղափար ու արժեք Ձեր արժեհամակարգում:*

Գ.Հ. - Արդարությունը բանականության կատարյալ ձևն է, չափման՝ Աստվածային միավոր, կյանքի շարժումը կառավարելու անփոխարինելի գործիք, որովհետև, եթե այդ շարժումը անարդարությամբ է կառավարվում, կյանքը, պարզապես, կանգ է առնում կամ վերածվում է քաոսի ու ապականության: Մարդը, անտեսելով Աստվածայինը, ստեղծել է չափման իր միավորը, անարդարության գնահատման իրեն հարմար արդյունք ստանալու համար: «Երանի նրանց, որ հալածվում են արդարության համար, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը»: Ասվածաշնչյան այս հակիրճ ձևակերպումը հրաշալիորեն ցույց է տալիս արդարության կարևորությունը մարդկության գոյության գործում՝ կենցաղից մինչև քաղաքականություն ու ավելի բարձր հարաբերությունների ոլորտ: Շատ մեծեր են անդրադարձել արդարությանը իրենց թե՛ գիտական, թե՛ գեղարվեստական գործերում. «Այն մարդը, որ ամեն առթիվ կպահաջե արդարություն սա մեր ծուռ աշխարհին մեջ, այդ մարդը վտանգավոր մեկն է և նաև, տեսակետով մը՝ պաշտելի», - ասում է Շահնուրը: «Օրենքն ասում է՝ արդար դատե...», - ընդվզում է Սայաթ-Նովան: Հռոմեացի պատմիչ Տակիտոսը գրում է. «Պետությունը կարելի է պահել երկու բանովարիությամբ՝ պատերազմում, և արդարությամբ՝ խաղաղ ժամանակ»: Երկու հազար տարի առաջ ձևակերպված այս մարգարեությունը վերահաստատվեց նաև մեր օրերում: Արցախյան առաջին պատերազմում մեր ժողովուրդը տվեց արիության այնքան օրինակ, որ կբավարարեր մեկ միլիարդ բնակչություն ունեցող երկրի: Սակայն խաղաղ ժամանակ նույն այդ ժողովուրդը հանդիպեց հրեշավոր անարդարության, ինչն էլ երկրորդ պատերազմում հանգեցրեց դաժան պարտության: Այնպես որ, առանց արդարության, քաղաքակրթությունը դատապարտված է ոչնչացման: Որովհետև քաղաքակրթության պահպանման ամենակարևոր պայմանն արդարությունն է: Արդարությունն ինձ համար կենսակերպ է, ազատությունը՝ վիճակ: Անարդարը չի կարող ազատ լինել, որովհետև անարդար արարքը անարդարություն գործողին զրկում է ազատությունից: Ազատությունը շատերի համար կրքերին (կենցաղայինից մինչև քաղաքական ու անասնական) հագուրդ տալու հնարավորություն է, փոքրամասնության համար՝ դրանք զսպելու կարողություն:

Կ.Մ. - *Կամա թե ակամա ես պետք է Ձեր գրականությանն անդրադառնամ: Որտե՞ղ է Ձեզ համար ավարտվում իրականությունը, և ապա՝ որտեղի՞ց է սկիզբ առնում գրողի երևակայությունը: Ինչպե՞ս է Ձեզ հաջողվում ընթերցողին պարզապես գամել գրքին՝ մեկ շնչով ամեն ինչ իմանալու անհագ ցանկությամբ տոչորելով: Դուք կյանքո՞ւմ էլ լավ պատմող եք:*

Գ.Հ. - Իրականությունն ինձ համար ավարտվում է հենց այն ժամանակ, երբ սկսում եմ գրել: Իմ նպատակը երբեք չի եղել իրականությունը ներկայացնելը: Դա անելու համար պարտադիր չէ գրող լինել, թեև հազարավոր այդպիսի գրքեր կան ու էլի գրվում են: Այն իրականությունը, որի մեջ ապրում է մարդը, կեղծ իրականություն է, ավելի ճիշտ կլինի ասել՝ ամենօրյա օգտագործման իրականություն: Ապրելու իրականությունը դրանից դուրս է: Գոգոլ, Կաֆկա, Աստուրիաս, Մարկես, Կամյու և էլի շատ մեծեր ձգտել են հենց այդ իրականությունը բացահայտել ու վերադարձնել մարդուն: Դա չպետք է շփոթել ֆանտազիայի, ֆանտաստիկայի կամ ֆանտասմագորիայի հետ: Ամենադժվարը, որը տարիների աշխատանք է պահանջում, ստեղծագործության նպատակի ձևակերպումն է, այդ նպատակի իրականացումը պայմանավորող դրվագների ճշտումը, ուսումնասիրումն ու հիմնավորումը, կառուցվածքի ձևավորումն ու հարցադրման հստակեցումը: Դրան հաջորդում է կենտրոնացումը, որն ինձ դուրս է բերում այս իրականությունից ու տեղափոխում բոլորովին այլ հարթություն: Այստեղ միանում է ավտոպիլոտի ռեժիմը, ու այդ պահից, կարելի է ասել, ես դադարում եմ գրել: Ես սկսում եմ գրի առնել: Գրի առնել այն, ինչը տեսնում ու լսում եմ՝ կերպարների շարժումը, նրանց խոսակցությունը, տեղը, ժամանակը, եղանակը, բախումներն ու դրանց հանգուցալուծումը: Գրանցում եմ նոր կերպարների հայտնվելը, որոնք, ընդհանրապես, նախատեսված չէին: Այսինքն, նկարագրում եմ այն իրականությունը, որում ապրում ու գործում են հերոսները: Այդ իրականությունը շատ նման է այս իրականությանը, բայց և շատ տարբեր է: Տարբեր՝ իր փիլիսոփայությամբ, մտածողության նոր որակով, հարաբերությունների անսովորությամբ, ամեն ինչի նկատմամբ վերաբերմունքի այլ մակարդակով: Դա բերում է նոր արտահայտչամիջոցներ, նոր գեղագիտություն, նոր ռիթմ՝ փոխելով գեղարվեստի մասին ունեցած մեր պատկերացումները: Ահա սա է նոր իրականությունը, որը պայմանականորեն կոչում ենք երևակայական:

Գիրքը հետաքրքիր դարձնում են մի շարք հանգամանքներ. թեմա, դրվագների ճշգրիտ դասավորություն, բախումների մոտիվացիա, հերոսների ոչ ստանդարտ վարքաբանություն և այլ միջոցներ: Սակայն գլխավորը նոր իրականության ու դրան ադեկվատ գրական տեխնիկայի առկայությունն է:

Չգիտեմ, կյանքում լավ եմ պատմում, թե չէ, բայց եթե 2000 տարի առաջ ծնված լինեի, հավանաբար, պատմիչ կդառնայի:

Կ.Մ. – *«Ոչինչ չի կարող մոլորեցնել մարդուն այնպես, ինչպես ատելության հարուցած ժպիտը»,-հրաշալի մեկնակետ՝ մարդու՝ որպես անհատի՝ դիմացինի նկատմամբ վերաբերմունքի դրսևորումն ընկալելու համար: Ուրեմն՝ ո՞ւմ կարող եք ատել և արդյոք կարո՞ղ եք ատել ընդհանրապես:*

Գ.Հ. - Ատում եմ «ատելություն» բառը: Ու Աստված այս դեպքում էլ է բարեհաճ գտնվել իմ նկատմամբ: Իմ ամբողջ կյանքում, նույնիսկ մեկ ակնթարթ նման զգացում չեմ ունեցել: Բայց ես գիտեմ, թե դա ինչ ավերիչ բան է: Ատելությունը սպանում է ատողին բարոյապես:

Կ.Մ. – *«Կարևորը, որ արվեստի գործը մարդուն ստիպի մտածել: Դա է արվեստի իմաստն ու արվեստագետի առաքելությունը...», - առաջարկում եմ փոքր-ինչ ծավալվել այս մեկնակետով:*

Գ.Հ. - Ընդհանրապես ընդունված է՝ ցանկացած ստ եղծագործություն, անկախ ժանրից, գնահատել դրանում առկա կամ դրա հարուցած հույզի աստիճանով: Դա մոլորություն է: Որքան մեծ է հույզի կուտակումը ստեղծագործության մեջ, այնքան պակաս արժեքավոր է տվյալ գործը: Իսկական արվեստը մաքուր բանականության հետևանք է: Երբ մարդը առնչվում է դրան, կարդում է, եթե վեպ է կամ բանաստեղծություն, դիտում է, եթե կտավ է կամ ֆիլմ, բանականության էներգիան փոխանցվում է նրան ու ստիպում մտածել: Մտածել՝ հենց տեսածի մասին: Այսինքն՝ տվյալ ստեղծագործությունը տեղավորվում է մարդու մեջ ու սկսում է աշխատել: Դա հրաշք է: Մի անգամ ընկերներիցս մեկը պատմեց, թե ինչպես էր հանդիսատեսը արտասվում ներկայացման ժամանակ: Ես պատկերացրի, թե ինչպես է մեկը, Պիկասոյի կտավի առաջ կանգնած, հոնգուր-հոնգուր լաց լինում: Դա զավեշտ է: Երբ նայում եմ Փարաջանովի «Նռան գույնը», ես չեմ հուզվում: Ինձ փոխանցվում է մի անսովոր էներգիա կամ ավելի ճիշտ կլինի ասել՝ լույս, որը կլանում է իմ ներսի խավարն ու ստիպում ավելի պայծառ, ավելի կատարյալ տեսնել աշխարհը: Որովհետև բանականությունն ինքը կատարելությունն է:

Կ.Մ. – *Ի՞նչ է տառապանքը, երջանկությունը, ապա ապրելու ցանկություն առեղծվածը՝ ըստ Ձեզ:*

Գ.Հ. - Կյանքը թմրանյութ է: Բավական է մի անգամ փորձես, այսինքն՝ ծնվես, այլևս չես ուզում բաժանվել: Դա սովորական կախվածություն է, որը, սովորաբար, դրսևորվում է կենցաղային տիրույթում, ասենք՝ կախվածություն մարդուց, առարկայից, նյութից, սովորույթից և այսպես շարունակ: Ու դրանց փոփոխությունը կամ բացակայությունը, շփոթեցնում է, ցավեցնում, տառապեցնում: Սակայն ապրելու ցանկության առեղծվածը այս կախվածությամբ չի պայմանավորված: Ավելի շատ պայմանավորված է աշխարհի մասին ինֆորմացիայի ընդհատման մտքի առաջացրած խուճապով և այն մտայնությամբ, որ մարդը չի պատկերացնում աշխարհն առանց իրեն: Իսկ տառապանքը մեր պատասխանատվությունն է մեզ շրջապատող աշխարհի համար: Եվ որքան մեծ է պատասխանատվությունը, այնքան ավելի մեծ է տառապանքը: Եթե նրան նայենք գոյության անատոմիայի տեսանկյունից, կտեսնենք, որ այն մեր կյանքի կարկասն է, որի վրա հավաքված է մեր լինելությունը: Այլ խոսքով՝ դա բանականության շարժն է: Չկա բանականություն, չկա ոչինչ: Տառապանքից չպետք է վախենալ:

Ես չգիտեմ՝ ինչ է երջանկությունը: Այդ բառը իմ մեջ ոչ մի ռեակցիա չի առաջացնում, որովհետև ես չեմ պատկերացնում, թե դա ինչ վիճակ է: Շատերն այն փորձում են ներկայացնել որպես սեր, ուրախություն, ուրիշները՝ հոգեկան անդորր կամ բավարարվածություն: Դա ինձ չի համոզում: Եթե երջանկությունը ենթադրում է ինչ - որ գերագույն մի բան, ապա դա ապրելն է: Ու որոնել այն՝ ապրելուց դուրս, աբսուրդ է: Ես դա չեմ հասկանում ու կարծում եմ՝ ոչ մի կենդանի արարած դրա մասին չի մտածում, բացի մարդուց: Որովհետև, բացի մարդուց, դա ոչ մեկին պետք չէ:

Կ.Մ. – *Ինչպե՞ս կներկայանաք Ձեզ չճանաչող ընթերցողին. Կարո՞ղ եք արդյոք տալ ամբողջական բնութագիրը Ձեր կերպարի՝ բոլոր տեսանկյուններից՝ որպես մարդ, որպես մասնագետ, որպես գրող: Ասել է՝ ճանաչո՞ւմ եք ինքներդ Ձեզ, և արդյոք ինքնաճանաչման որոշակի աստիճանը տվե՞ց Ձեզ վստահություն՝ հեղինակելու գրքեր, այն էլ այս տրամաչափերի:*

Գ.Հ. - Դա ավելի լավ կանեն իմ հերոսները: Ինձ ճանաչելու մասին մտածելու ժամանակ երբեք չեմ ունեցել: Ու միշտ միևնույնն է եղել ինձ համար, թե ով ինչպես կճանաչի ինձ կամ ընդհանրապես, կճանաչի, թե՞ ոչ: Միշտ ուզեցել եմ ապրել բոլորի նման՝ հասկանալով, որ դա միակ կոմպրոմիսն է, որին կարող եմ գնալ հանգիստ ապրելու համար, սակայն, որին այդպես էլ չկարողացա գնալ: Այն արժեքները, որոնցով ապրում էր մեծամասնությունը, նողկալի էր: Դա իմը չէր: Ինձ կատարյալ հուսահատության են հասցրել անարդարությունը, ընչաքաղցությունը, միապաղաղությունը, անշարժությունը, լճացումը: Ու կատարյալ հաճույք է պատճառել դրանց դեմ պայքարելը, մարդկանց օգնելը: Բայց դա թանկ հաճույք է: Գրելը նույնպես մարդկանց օգնելու միջոց է եղել ինձ համար: Գրել, այսինքն, ասել բաներ, որոնք մարդիկ իմանալու ժամանակ կամ հնարավորություն չունեն: Հուշել, նախազգուշացնել, նախապատրաստել նրանց ինչ - որ շատ կարևոր մի բանի: Իսկ «Արքաների ընտանիքը», «Վերջին պատվիրանը» գրքերի ստեղծման շարժառիթը՝ խորը տագնապն էր հայոց ապագայի համար: Ու այդ տագնապը կարծես թե այնքան էլ անհիրական չէր:

Կ.Մ. – *Կա՞ արդյոք այնպիսի հարց, որի մասին կցանկանայիք խոսել, բայց մենք շրջանցեցինք: Կամ որպես ամփոփում...*

Գ.Հ. - Մենք զրուցեցինք ու, կարծում եմ, այն ստացվեց: Որպես ամփոփում, կասեմ՝ շնորհակալություն հաճելի զրուցակցության համար:

Կ.Մ. - *Շնորհակալություն:*

ՖԱԻԶԱ ԽԱԼԻՄՈՎԱ
(Չեչնիա,Գրոզնի)

ԲԵԿՈՐԸ

Այսօր մայրիկիս տարեդարձն է, և մենք՝ նրա զավակները, որոշել ենք փոքրիկ տոն կազմակերպել: Կհավաքվենք, կխոսենք, մի կուշտ հաց կուտենք, իսկ նա կհիշի մեր մանկական չարաճճիությունները, կծիծաղենք, իսկ հետո կլռենք միասին…

Հայրս վաղուց չկա…

Մայրս սիրում է հոնի տնական հյութ, իսկ ես՝ ոչ: Այդ կարմիր ըմպելիքի տեսքից անցյալի հիշողությունները հառնում ու օձի նման խեղդում են, խեղդում, խեղդում…

Մոխրագույն քողով պատված երկինք, ամպերի փոխարեն ծխի թանձր քուլաներ են՝ այրվող տներից ալիք-ալիք վեր սողացող: Երկնային հավաքարարի պես քամին կամացուկ ավլում է շուրջը, միայն թե՝ ժամանակավոր է դա:

Պարզապես «երկաթե ագռավները» հոգնել են, որոշել են ընդմիջել, լիցքավորվել, որպեսզի ավելի ուժգին թափով հարվածեն և անպայման շատ դիպուկ, հանկարծ թիրախներից չվրիպեն: Նրանց թևերը գերտաքացել են…

Մի քանի աման պահածո, և «երկաթե թռչուններին ուղղորդողները» կրկին պատրաստ կլինեն բարին չարից մաղել:

Կարևոր չէ՝ ինչու այսպես եղավ, և ով է մեղավոր… Այստեղ լոկ մեկ ճշմարտություն կա՝ տառապանքը: Մեկ իրողություն կա միայն՝ մահը: Գարուն, ամառ, աշուն թե ձմեռ, հարուստ ես կամ աղքատ, ծեր ես թե ջահել, կին ես թե տղամարդ. ոչինչ և ոչ ոք էական չէ: Մարդիկ բաժանվում են միայն մեռածների, ողջերի ու մեռնելը գերադասողների:

Լռությունը… ահա մեզ ուրախացնող միակ բանը: Որովհետև հնարավորություն է տալիս դուրս սողալու նկուղից, շնչել օդը, թեկուզ ծխի հոտով ներծծված, լցված ճիչերով, ողբով ու գունավոր աղոթքներով, սակայն օդը… լիաթոք զգալ ու շունչ քաշել: Այժմ սակայն լռության մեջ ինչ-որ չարագուշակ բան էլ կա, ինչ-որ դավադիր բան՝ սարսափեցնող «անբնական…Հատկապես մութ ուժերի գոյությունն զգալիս. երբ նրանք լռում են կարճատև համազարկերից հետո, ուրեմն հրե նետերով ավելի խիտ կրակոցներ են տեղալու, հիմա էլ «հաուբիցներից» են մահ սփռելու:

Մենք նախանձում ենք խաղաղ չվող թռչուններին, ու նրանց, որոնք հեռացան այս աշխարհից: Հրաշքի ենք սպասում: Եվ դեռ մինչև վերջ չենք հավատում, որ «դու ինձ, իսկ ես՝ քեզ»-ը իրականում տեղի է ունենում: Միամիտները կարծում են՝ երազ է, եթե ոչ, ուրեմն հաստատ աշխարհի վերջն է:

Վեց հոգով ենք. ելել ենք հոգիների ընդհատակյա ապաստարանից: Խոհանոցում փոքր սեղանի շուրջ խմբված՝ մի քանի բառ փոխանակելուց հետո ուտում ենք խաշած կարտոֆիլ՝ մեր նախաճաշը, ճաշն ու ընթրիքը: Երկու մեծահասակ ու չորս փոքրիկ մարդուկներ… նստած են՝ ամեն մեկն իր խոհերի հետ: Ամենափոքրը դեռ խոսել չի կարողանում: Հիմա գիտեմ հաստատ, որ թմբլիկ մանչուկի առաջին բառը լինելու է «բում»-ը: Նա կարտասանի այդ բառը, հենց տեսնի տան մոտով անցնող հրասայլը: Իսկ ինչի՞ մասին է խորհում այս փոքրիկ էակը. անհայտ է: Այս հրավիճակում ամենաերջանիկն է նա. չի բաժանում մարդկանց լավ ու վատի, զինվորականի ու քաղաքացիականի, բոլորին հավատում է, իսկ երկար ու խիտ թարթիչներով երիզված դարչներանգ աչուկները լի են լույսով: Նայում եմ փոքրիկին ու գիտակցում. մենք բոլորս այս մանչուկի հետ մի հարցում հիմա շատ ենք նման՝ անպաշտպան ու անօգնական ենք…

Ասում են՝ մարդն ութ հնարավորություն ունի մահից խուսափելու: Մի՞թե մենք արդեն սպառել ենք կյանքի սահմանված չափը: Վիրավորական ու ցավոտ է հեռանալ ոմանց անհագ «ախորժակի» պատճառով:

Մինչ մենք ուտում ենք կարտոֆիլի մնացորդները, մինչ հավաքում ենք մնացորդները նրանց, որոնք միառժամանակ առաջ մարդ էին կոչվում, մինչ նրանց թաղում ենք հապշտապ ու դեռ չենք էլ հասցրել տապանաքար դնել, մինչ մենք պառկած ենք փլատակների տակ… ինչ-որ մեկը հանգիստ հաց է ուտում ու տեսնում մեզ հեռուստացույցով, նրա համար մենք ուղղակի տիկնիկներ ենք, ընդամենը հանգամանքների զուգադիպում ու պատեհ զոհեր: Մենք պարզապես վիճակագրություն ենք: Մի՞թե ճիշտ է, որ հանուն «հզոր» շահերի, մեր երկրում ոչինչ ու ոչ մեկին չեն խնայում, չեն խղճում: Մինչ որդիների մայրերը լալիս են, ինչ-որ մարդիկ կերտում են իրենց զավակների ապագան: Իսկ մենք մեռնում ենք, իսկ մենք նկուղում համրում ենք միմյանց…

Մեզնից ոմանք անխուսափելիորեն մնում են դրսում՝ դառնալով Պիկասոյի նկարների կերպարները ասֆալտին: Սպանվածների հոգիները երկար ժամանակ դեռ մնում են ու չեն հեռանում. չեն գիտակցում, որ էլ չկան: Գիշերը՝ ուղիղ տասներկուսին, ոտնաձայներ են լսվում: Նրանք շրջափակում են մեզ ու պահանջում, որ բացենք ապաստարանի դռները: Իսկ լուսաբացին հալվում են վաղորդյան մշուշի պես: Գուցե ամենևին էլ հոգիներ չեն, այլ ոգիներ: Չգիտեմ:

Մենք վեց հոգի ենք: Դեռևս վեց հոգով ենք: Այնքան ուրախ ենք, որ արկերն ու դիպուկահարները վրիպել են, ու մենք չենք մնացել կարմիր ջրափոսերում պառկած: Այնպե՜ս տհաճ է հոգու վրա ծանրանում մեր այդ ուրախությունը: Ուստի լուռ ուտում ենք կարտոֆիլն ու խմում քաղցր թեյը: Չգում ենք ամեն ումպը, փորձում որքան հնարավոր է՝ երկար ըմբոշխնել քաղցր համը, բայց չենք հասցնում խմել մինչև վերջ: Մի կուշտ ընդմիջած «սահմանադրական կարգի պահապանները» նորից սկսում են մեզ վրա հուրուկրակ թափել:

Հետ ենք փախչում նկուղ: Եթե արկը չընկնի ուղիղ մեզ վրա, եթե նռնակներ չնետեն, եթե ականով չպայթեցնեն, գուցեև ողջ մնանք: Կարճ ճանապարհն այնքան երկար է թվում, ոտքերս էլ՝ անչափ կարճ. չէ՞ որ պետք է հասցնենք ճողոպրել նախքան պատերի փլվելը: Բայց ես հետ եմ ընկնում, քայլերս դանդաղեցնում ու քարանում եմ՝ ինձնից հեռացող հարազատներիս նայելով: Վե՛րջ, ես հանձնվում եմ: Հոգնել եմ փախչելուց, վախենալուց, թաքնվելուց էլ եմ հոգնել:

-Ես պատրա՞ստ եմ, սպանե՛ք ինձ, ես այստեեե՞ղ եմ,- գոռում եմ՝ շնչահեղձ լինելով: Նկուղի դուռը շրխկոցով փակվում է: Հարևան տունը պայթում է. ճռնչոց, ծուխ, բեկորները ցաքուցրիվ են լինում: Զգում եմ մի սուր ցավ ձախ կողմում՝ հենց սրտիս մոտ. դիպել է ինձ: Ինչ արած՝ արդեն մեկ է, կարևորը մարմնիս բոլոր մասերը տեղում են. ինձ գերեզման կդնեն ամբողջական: Սեղմում եմ ծածկոցը, որ վերցրել էի փախչելիս: Կանգնած եմ փողոցի մեջտեղում ու նայում եմ երկինք: Չէ, ես չեմ հարցնում երկնավորներին, թե ինչու եմ դեռ տասնչորսս չբոլորած այսպես հեռանում. ես ախր այդպես էլ չեմ ասել ոչ մեկին մի այսպիսի հասարակ արտահայտություն. «Գիտե՞ս, դու էլ ես ինձ դուր գալիս»: Իմ բախտն ավելի շատ բերեց փաստորեն, քան այն խեղճուկրակինը, որ վառվում է հիմա ինձնից քիչ հեռու: Շուտով մոխրի կվերածվի, քամին այն կտարածի քաղաքով, ինչ-որ մեկի բերանում կհայտնվի, ու ջղային կթքեն նրան: Արդյունքում կհայտնվի անհետ կորածների ցուցակում:

«Ագռավները» կատարում են մեր քաղաքն ավերող վերջին հնարքները: Բետոնե պատի տակից աղաղակներ ու տնքոցներ են լսվում: Հանկարծ ինչ-որ ձեռքեր գրկում ու նկուղ են իջեցնում ինձ: Իմ ծնողն է: Հայրս ինչ-որ բան է հարցնում, բայց ես չեմ լսում: Միայն պինդ սեղմում եմ ծածկոցն ու նայում ինձ հարազատ մարդկանց:

«Չէ՛, ոչ մեկը ոչինչ չի իմանա. ես կմեռնեմ լուռ ու հպարտ, ինչպես մեզնից շատերը… առանց տրտնջոցի, անարցունք: Եվ արդյո՞ք արժեք ունի իմ կյանքը»,- մտածում եմ:

Դեմքս սփրթնած է, ձեռքերս թուլացած, զգում եմ, որ երկար չեմ դիմանա. ալ հեղուկը կհորդի վերքից, կբացահայտի գաղտնիքս:

Վերջին րոպեներին դիմում եմ Աստծուն, խնդրում եմ փրկել մնացողների հոգիները, և նրանց, որ վաղուց էլ չեն շնչում, նրանց, որոնք ինչ-որ բան գոնե կարող են փոխել այս աշխարհում ու ստիպել, որ մտափոխվեն պատերազմ հրահրողները: Ամեն նյարդը, բջիջներիս ամեն ատոմը, մանրադիտակային անոթը, խալը, ամեն ինչ գործի է դրված: Հոգևոր մոլեգնումի պահ է: Ժամանակն ասես կանգ է առել, նկուղի ձայները լռել են, մարդիկ՝ քարացել: Եվ նրանք, որ լալիս են, ու նրանք, որ Բարձրյալին են աղոթում՝ ձեռքերը վեր պարզած, և գլուխները կախ՝ իրենց ծնողներին սեղմվածներն էլ «բոլորը ինձ համար «տեղում քարացիր» խաղի հերոսներ են: Վախ, հոգնածություն, տառապանք եմ տեսնում նրանց դեմքերին: Իսկ իմ հոգում խառնվել են զգացմունքների իրարամերժ երանգները. անտարբերություն, սրտացավություն, խղճահարություն, հպարտություն, համակերպում, կյանքի տենչ, կյանքից հրաժարում, ցավ… Դեմքիս ու մարմնիս մկանները լարվել են՝ մաշկը ձգելով: Դժվար եմ շնչում: Ասես Տիեզերքում պայթյուն է եղել, մի ճիչ է արձակվել գիտակցությանս ամենահեռավոր խորքերից, հոգուս տիեզերական ընդարձակ տարածություններից: Բաց եմ թողնում կանաչ ծածկոցը: Սրտիս ցավը միանգամից մեղմանում է: Տեսնեմ՝ վերքը չկա. արդյոք եղե՞լ է երբևէ՝ հայտնի չէ:

Մի՞թե հասարակ ինքնաներշնչանքն ինձ հասցրեց այս վիճակին: Խենթությանը համազոր մի անզուսպ ուրախություն ինձ համակեց այս մտքից: Քարացած մարդիկ կենդանացան, ու մեզ վրա նորից սկսեցին կրակել: Ու կրկին լսվեցին ճիչեր, լաց, բարձրաձայն աղոթքներ…

Իսկ ես շարունակում եմ ծիծաղել: Մայրս հարցրեց՝ ամեն ինչ կարգի՞ն է, ես պատասխանեցի՝ այո՝ շարունակելով ծիծաղել: Երբ խաղաղվեցի, կարմիր կակաչներով ծածկոցը թաքցրի փայտե արկղում, որը մեզ համար սեղան էր: Դեմքս հանգստություն ու երանություն էր արտացոլում:

Այն գիշեր մեզնից ոչ մեկը չզոհվեց: Իսկ մահը շարունակում էր անհագ խրախճանքով թափառել մեր կողմերում դեռ էլի ու էլի…

Հապշտապ հուղարկավորած զոհերի գերեզմանաթմբերին ծաղիկներ են աճում: Հիմա շենքեր են բարձրանում, մեծանում են ուրիշ երեխաներ, ուրիշ մարդիկ, և տարիքս արդեն քառորդ դարն անց է: Սակայն բեկորը ժամանակ առ ժամանակ զգացնել է տալիս. սիրտս նվվում է գիշերներն ի լույս: Հիշողությանս մեջ այն օրերի իրադարձություններն են շարվեշար: Ես գոռում եմ.

-Չէ՜, չէ՜, պետք չէ, խնդրո՜ւմ եմ, էլ չե՛մ ուզում այս ամենը տեսնել:

Փակում եմ ականջներս, ամուր սեղմում կոպերս, միևնույնն է՝ լսում եմ ծանոթ ձայները նրանց, որ այն քաոսում հեռացան աշխարհից: Տեսնում եմ՝ ինչպես են նրանք վազում, փախչում, ընկնում, մասնատվում, նորից վազում…

Ու տանջում են ինձ հարցերը, և այսպես նորից ու նորից, մինչև քունը հաղթում է ինձ ու դատարկված, տառապանքներից հոգնած՝ նիրհում եմ արցունքներից խոնավ բարձին:

Բժիշկները չեն կարողանա օգնել: Նրանք չեն օգնի: Նրանք չեն հասկանա: Սա գիտենք միայն ես ու դու՝ գետնի տակ ապրածներս. իմ սրտում բեկոր կա…

Նյութի աղբյուրը՝ «Պատերազմի արվեստը» ալմանախ

Թարգմանությունը ռուսերեն բնագրից՝ Մարինա ԳԵՎՈՐԳՅԱՆԻ



Նոր գիրք, նոր թարգմանություն, Ուիլքի Քոլինզ «Լուսնաքարը»

Ուիլքի Քոլինզը (1824–1889) վիկտորիանական դարաշրջանի լավագույն գրողներից է: Թեև դետեկտիվ ժանրի հիմնադիր համարվում է էդգար Ալան Պոն, բայց Ուիլքի Քոլինզի «Լուսնաքարը» վեպը դետեկտիվ ժանրի առաջին մեծածավալ ու հաջողված գործն է, որը սահմանել է այդ ժանրի հիմնական սկզբունքները:

«Լուսնաքարը» վեպում առաջին անգամ ներկայացվել են մի շարք տարրեր, որոնք հետագայում դարձան 20-րդ դարի դետեկտիվ պատմության բնորոշ դասական հատկանիշները: Դրանք են՝ կողոպուտ, քննիչ, դետեկտիվ հարցաքննություններ, մեծ թվով կասկածյալներ, մի խոսքով՝ ողջ ոստիկանական ընթացակարգը:

Վեպը հետաքրքրական է նաև կառուցվածքային առումով, որտեղ կորած գոհարի հետ առնչություն ունեցող անձինք գրավոր տեսքով վկայություն են տալիս այն օրերի մասին, երբ Լուսնաքարն առեղծվածային կերպով անհետացել է: Վիկտորիանական ժամանակաշրջանի գրականության մեջ պատումի նման ձևը ևս կարելի է առանձնահատուկ համարել: Թեև գիրքը հաստափոր է, բայց տարբեր պատմողներն ու անընդհատ լարվածության մեջ պահող սյուժեն կստիպեն չկտրվել գրքից:

Հատկանշական է խոսել նաև թարգմանության մասին: Թեև վեպը առաջին անգամ չի դրվում ընթերցասերների սեղանին, սակայն նոր թարգմանությունը բնագրից է, մինչդեռ նախկինում թարգմանվել է միջնորդ լեզվից՝ ռուսերենից: Թարգմանությունների համեմատական ուսումնասիրությունը ցույց է տվել, որ նախկինում եղել են բազմաթիվ բացթողումներ, և նույնիսկ բացակայել են ամբողջական պարբերություններ ու գլուխներ: Սովետական գրաքննությունը բաց է թողել խոհափիլիսոփայական, անհատ ձևավորող և կրոնական գրեթե բոլոր հնարավոր հատվածները: Նոր թարգմանությունը ներառում է այդ բոլոր բացթողումներն ու զերծ է ամեն տեսակի ռուսաբանություններից: Վեպը անգլերենից թարգմանել է Արմինե Մուրադյանը:

«Պատերազմի անսպասելի հանգամանքները նրան դարձրել են աշխարհի ամենամեծ ադամանդներից մեկի տերը, և նա հիմքեր ունի կասկածելու, որ ո՛չ ինքը, ո՛չ էլ իր թանկարժեք գոհարը երկրագնդի ոչ մի անկյունում, ոչ մի տան մեջ ապահով չեն լինի, եթե այդ քարը մնա իր մոտ: Այս օրհասական հանգամանքներից ելնելով՝ նա որոշել է իր ադամանդն ի պահ տալ մեկ ուրիշի: Այդ մարդուն ոչ մի վտանգ չի սպառնա: Նա կարող է այդ թանկարժեք քարը հանձնել հատուկ պահպանության և առանձին հսկողության տակ գտնվող գանձատուն, օրինակ բանկիրի կամ ոսկերչի մոտ, որտեղ ապահով է թանկարժեք իրեր պահելը: Նա առանձնապես ոչ մի պատասխանատվություն չի կրելու, միայն ամեն տարի կա՛մ անձամբ, կա՛մ վստահելի ներկայացուցչի միջոցով, նախապես պայմանավորված հասցեով, նախապես պայմանավորված օրերին ստանալու է գնդապետի նամակը պարզ ծանուցումով, որ ինքը դեռ ողջ է: Իսկ այն դեպքում, եթե պայմանավորված օրը նամակ չստանա, գնդապետի լռությունը կարող է ընկալվել իբրև նշան, որ նա հաստատ սպանվել է: Միայն ու միայն այդ պարագայում պետք է ադամանդի հետ պահվող կնքված փաստաթղթերը բացվեն և ուղղակիորեն կատարվեն բոլոր պահանջները, որոնք վերաբերում են ադամանդի տնօրինմանը»:

Հատված Ուիլքի Քոլինզի «Լուսնաքարը» վեպից

ԻՆՔՆԱԱՌԵՐԵՍՈՒՄ ԿՇԻՌՆԵՐՈՒՄ ԱՆՀԱՅՏԻ
(պոեմ)

Ճակատագրի անկյունադարձում
ՌՈԲԵՐՏ ԵՍԱՅԱՆ

Ակնթարթն է ազատագրվում
որպես զոհասեղան

1.
Գրել ժամանակի էջում,
նույնն է, թե գրել վիրակապի վրա,
գրել ճանապարհի շնչառության մեջ՝
հատուկենտ լսվող քայլերում անցորդի,
գրել երկնքի անձրևային հայացքում՝
թռիչքով թռչունի:
Ճանապարհի ոգուց պոկում եմ մի փետուր
և մակագրում Անհայտի էջերի վրա:

2.
Ես քայլում եմ ստվերի վրայով քաոսի,
հետքերիս վրա բացվում են վիհերը:
Ես պատվում եմ
փետուրներով արձագանքի:
Անորոշության բիբերը կտցահարող
թռչուններ են
վայրկյանները:
Իմ մեջ արթնանում է հիշողության կղզին:
Ոռնացող հուշերս օրորվում են
ցցերին կսկիծի:

Իմ հետքը դառնում է ոգու սովից արթնացող
աներևույթ կյանք,
ժամանակի պատանդ:

Անհայտության սյուներն ի վեր
ծառս է լինում լույսը՝ հիշողության
ձին:
Եվ ծառի ճյուղը
ծաղկած երազ է ասեղնագործում
վայրկյանների քարե հայացքի վրա:
Ստվերս մի աղբյուր է,
որից ելնող ուրվականները
ծարավի հուշարձաններ են:
Պատմության մեկուսարանը:
Մի ձեռք պատուհան
է նկարում հույսի
ճերմակ կավիճով:
Պատերազմող երկրի սահմանները
բողբոջում են ցավի մեջ.
զինվորի խիղճը՝ լույսի զոհասեղան:
Ոգու հատիկներ է կտցում ճանապարհը:
Իմ ձգտումն ինձ կուլ է տալիս
հայացքի ներքո Բարձրյալի:

***
Գրիչս ոչ թե գրում,
այլ բացում է հետքը առասպելի:
Շուրթերիս մոխիրներում պեծկլտում է
երկինքը բառերի:
Հավատս թոթափում է իրենից
թարթիչները սովորության:
Պտտահողմի երկինք:
Երազների աներևույթ հողմը
փլուզում է
աշտարակը գաղափարի:
Եվ աստղեր են ծնվում աներևույթ Գոյի
հորիզոններում:

3.
Աղոթքներիս անապատում վազվզում է
երկինքը մանկության:
Լռության փոթորիկ:
Հացը գլորվում է
եզրով անդունդի,
որպես լույս,
տիեզերական պատարագ:
Արցունքներիս մենակության ծովում
ճողփում է տառապանքիս լաստը:
Թռչո՛ւն,
մի՛ կտցիր աչքը հիշողության…
Երկինքի հրե մռունչն է ժայթքում
սալաքարերից:
Անհո՛ւն,
մի՛ կտցիր աչքը լռության…
(Հայը ճամփորդում է երակներով
երկնքի,
որպես հոգի,
այսուհետ՝ ա՜ստղ…):
Ես ինձ ընդառաջ եմ գալիս
անհայտությունից:

4.
Հուշի թևերը մեխվում են պատերին
գիշերախև կրքի:
Իմ և իմ միջև… ծաղկել է ծառը-
ավերված հիշողության արցունքո՜տ
դեմքը…
Հայացքների բևեռների միջև
կանգնել եմ որպես
ծարավ…
Իսկ ինչո՞վ լցնել անդունդը հոգու,
եթե հայացքս դուրս է թռչում
իմ դեմքից
որպես խցան:
Գրիչը՝ աղոթո՜ղ ձեռք:

Տողը հորիզոնի դեղակարմիր ցողունն է,
որի վրա իր բույնն է հյուսում
Անհայտությունը:

Ներշնչանքի տարածքից հոսում է աղբյուրը ոգու:

Սահմանից այն կողմ
գլորվում է իմ տեսողությունը,
որպես գնդակ…

Անհնար է գրել թռիչքի վրա
ծիծեռնակների:
Հոգու դռներից թևում են հասցեները:
Արցունքների ճերմակ աղավնիները
կտցում են
իմ ափից
մենակության հատիկները դեղին:
Հիշողության վաղը
աստիճաններին խաղացող մանո՜ւկ է…
Աստղի ընթացքով ճանապարհորդում եմ,
որպես բառ…

Արցունքների թևեր են բառերը,
որ ընկնում են հուշի երկաթգծերի վրա…
Ակնթարթն է ազատագրվում,
որպես զոհասեղան:

5.
Սուր քարերի մեջ գտնում եմ իմ դեմքը
և լապտերը ցավի:
Ես պառկել եմ
համբերության լեռան վրա,
որ հանգստանա իմ ճանապարհը:
Հողի գիշերվա մեջ կայանում է
ձնծաղիկը,
որպես տեսադաշտն Անհունի:
Ես իմ Հեռուն եմ:
Անձրևի օրորոցներում
բարուրվում են
ճանապարհները:
Անապատի ծարավն է մրրկում
թարթիչներից երկնքի:
Այս տողերի հայտնությունը
վագրի ցատկ է
վառվող օղակի միջով ժամանակի:
Հոգուս լուսանցքներում
գիշերող ճանապարհները
բացվում են
շեղբերի վրա հիշողության:
Նախնիներիս շնչով արթնանում է բառը:
Լույսը տրոփում է հայացքիս զարկերակում:
Թափուր պատվանդան է ժամանակը:
Ապակուց ցայտող ճառագայթի ծաղիկը
հորս հիշատակի խարի՜սխն է
(Ափերիս զարկող տարածությունը
փոխում է ուղղությունը ճակատագրի):

6.
Ստվերս պտտվում է
անցքի մեջ հիշողության,
որպես բանալի
(Ես իմ պատանդն եմ):
Եվ կայանում է
ճանապարհը՝ որպես
հիշողության միջանցք
(Ես իմ ստվերն եմ):
Մի ձեռք ջնջել է հրեշտակի թևից
հասցեն Հարության
(Ես իմ ստվերն եմ):
Եվ տառապանքը՝
զոհասեղան Ոգու
(Ես իմ… անդունդն եմ):
Ծնո՞ւնդ է սա,
թե՞ ինքնաառերեսում
կշիռներում Անհայտի
(Ես իմ… առեղծվածն եմ):
Հավատի արահետը
ձգվում է ինչպես
հիշատակի լույս…
(Ես իմ ճանապարհն եմ):

7.
Անհասության կետ:
Լույսի հայացքը մասն է հիշողության:
Անծանոթուհու ծոցում հալվում է
մոմը աղոթքի
և լուսավորում իմ ճանապարհը:
Մի դուռ է բացվում
Դեպի տիեզերական հաղորդակցության
պատարագը
(Շնչի՛ր բուրմունքը հեռավորության
և աճի՛ր ցավից,
որպես լույս):
Անդունդից մինչև լույս՝
ես իմ հիշատա՜կն եմ:

8.
Եվ տիեզերքն է բացվում,
որպես ձայնանիշերի
թագավորություն:
Լռության խմբավարությամբ
ժամանում է Տեսիլը՝
կարմիր վերնաշապիկով:
Ձայնի տարերքում
Արցախի վա՜ղն է:
Եվ հիշողության ստեղներով
սահում է ձեռքը Կամիլայի՝
հանելով խորքից ոգու
Հարության թռչուններ…
Մանկան քայլերը՝
ցորենի հատիկներ…
Քարի և իմ միջև
հիշատակի հո՜ղմ է…
Եվ Զաքարի առջև
փռված երգի ծո՜վն է…
«Մեր շունչը ծաղիկը բացեց
սերունդների համար՝
իբրև լո՜ւյս»:

9.
Ճախրանքի սահմանները ճոճվում են
թևերից Անհունի,
որպես զսպանակներ:
Մի դուռ է բացվում սահմանի վրա
Ոգևորության…
Ես իմ… Անհո՜ւնն եմ…

(մերկ է ոգին հողի)
կիսվում է օրը,
որպես գիրք,
իսկ ընթերցողը դեռ բացակա է…

Ոգու ցանկապատի տակով
հոսող առուն
մի ծաղկաթերթ է տանում
հեռուներին.
վերածնվող ժամանակի ոսկեերիզ թա՜գը…

10
Բառը կախվել է թևերից
ներշնչանքների:
Ուր որ է կընկնի լռությունը,
որպես… նահատակ:

Հ.Գ.
Ճակատագրի գրատախտակին
հրեշտակը գրել է մի բառ:
Լույսի հայացքը՝ թռչունի բույն:
Եվ միայնակ մի ծիծեռնակ
ստվերների փողոցներն է ավլում
զիգզագաձև թռիչքներով:
Անցյալն ու ներկան նստել են
Անձրևների լարի վրա:
Հեռվում ծաղկել է սերը,
որպես հորիզոնի ձնծաղիկ:

Ես ինձ ընդառա՜ջ եմ գալիս…

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ

ԽՈՐԷՆ ՔՀՆՅ ՊԷՐԹԻԶԼԵԱՆ
ՀԱԼԷՊ -ՍՈՒՐԻԱ

ԵՐԲ ԵՍ-Ն Է ՄԻԱԿ ՆԵՐԿԱՆ

Կայ կոյր եսը, միակ ներկան
Այլամերժ, չար, սուտին վկան
Մենքը մերժող ամէն վայրկեան
Մահացու մեղք, դաժան, գազան:

Կայ խուլ եսը, ինքնահաւան
Ինքնահաճոյ, չարադաւան
Կրծող քաղցկեղ բարոյական
Կործանարար, խաբէական:

Եսն է ներկայ, կեդրոնական
Իր վարմունքով թշնամական
Սեփականն է հաճոյական
Ընդհանուրին դէմ տեւական:

Եսը փառքի ջերմ սիրական
Կեղծ խոնարհ է եւ դերասան
Գովք սպասող, խեղճ մուրացկան
Աթոռներու թշուառ ծառան:

Եսէն շատե՜ր սայթաքեցան
Բարի վարքէն օտարացան
Շնորհիքներով հպարտացան
Վատ ընթացքով մոլորեցան:

Եսով ոմանք սնանկացան
Բարեկամներ ալ չունեցան
Կեանքով անմիտ, ողբերգական
Անմեռ սիրոյ ծարաւ եղան:

Մենքէն մարդիկ անջատուեցան
Մենքէն եսին վերադարձան
«Ես»-ին եղան տէր տիրական
«Մենք»-ին թաղման
մասնակցեցան:

Իմս քուկդ օրուայ թեման
Հարցեր, վէճեր կը բարդանան
Ըսի ըսաւ, մենք ժխտական
Մեր մենքը վեհ դարձաւ աժան:

Եսը ունի տխուր վախճան
Երբ մենքն է դուրս՝ երկրորդական
Եսերը մեր որբ կը մնան
Երբ գանձ ՄԵՆՔՆ է ո՞հ բացական:

ՇՈՎԻՆԱՐ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ-
ՂԱԶԱՐԵԱՆ
ՓՈՐԴԼԷՆՏ, ՄԱՐՏ 18, 2023

ՍԷՐԴ ԱՊՐԻՄ՝ ԱՆԷԱՆԱՄ

Խաչիդ դպչիմ,
Ցաւդ ճանչնամ,
Մեղքիս ցաւը՝ քեզ խաչ հանող,
Անձկութեան քեզ դատապարտող:

Մարմնիդ հպիմ արիւնաքամ,
խոշտանգուած,
Առանց Աստուած, ամայացած
հոգիդ գտնեմ,
Անձկութեանդ մէջ խորասուզուիմ,
Անձկութեանդ՝ խեղդող, խաւար:

Ամբոխին մէջ ես կորսուած՝
Հասնիմ քեզի,
Քղանցքիդ դպչիմ,
Ու հպումէն ահեղ, հզօր,
էութեամբս ես ցնցուիմ,
Մաքրուիմ, բուժուիմ, վերածնիմ:

Շուքիդ հետեւիմ ես անբաժան,
Կրնկակոխ քայլս՝ քայլիդ,
Օրինակովդ առինքնուած,
Ենթարկուիմ, հնազանդիմ,
Դաստիարակուիմ:

Աչքերս հայեացքիդ,
Ամբողջ էութեամբս կեդրոնացած,
Հիացմունքով մագնիսացած՝
Գերիդ դառնամ, ստրկանամ:

Ականջս շշուկիդ,
Ձայնդ ճանչնամ,
Սուրբ խօսքովդ ես հաղորդուիմ,
Իմաստութեամբդ յորդիմ,
Խոստովանիմ, բաշխուիմ,
նուիրուիմ:

Ծնկաչոք մտնեմ
Սրբութիւնն Սրբոց,
Վերջին շունչիդ հետ պատռուած,
Ու Աստուծմէ զիս բաժանած
Վարագոյրէն Սուրբ խորանին:
Հոն ճաշակեմ քաղցր մարմինդ
պատարագուած,
Ըմպեմ անապակ արիւնդ
վասն մեր հեղուած,
«Ի քաւութիւն եւ ի թողութիւն
մեղաց»,
Ու փառաբանեմ, օրհներգեմ,
Մեծարեմ քեզ բազկատարած:

Լոյսիդ ձգտիմ
Ու վեր յառնեմ,
Քեզի հասնիմ ու հաստատուիմ,
Սրբութեանդ մէջ թաթախուիմ,
Սիրտս՝ սրտիդ,
Հոգիս՝ հոգւոյդ,
Սէրդ ապրիմ՝ անէանամ
Գոյութեանդ անհունին մէջ լազուր,
էութեանդ կապոյտին մէջ անհուն:

ՀԱՄԲԻԿ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ
ՊԷՅՐՈՒԹ

ԵՐԱՆԻ ԹԷ...

Հրաշքներու չեմ հաւատար...
Բայց երանի, օր մը յանկարծ,
Աշխարհն ապրէր խաղաղութիւն...
Թող վերջ գտնէր քէն ու պայքար...

Սէրը դառնար վարակիչ բոց...
Մարդը ապրէր՝ անհոգ, անխոց...
Չարը մոռնար՝ յոռի արարք,
Զինք կոչէինք մենք՝ բարեգործ...:

Նախանձ մարդը, ըլլար ազնիւ,
Քինախնդիրն՝ մոռնար չարիք...
Բարբարոսը դառնար պարկեշտ,
Բաշխէր իր շուրջ՝ գութ ու բա-
րիք..:

Գիշատիչը, իսկոյն դառնար,
Լոկ ընտանի ու հնազանդ...
Իսկ գազաններն յայտնի, վայրագ՝
Չունենային... ժանիք երկար..:

Ազգեր բոլոր, երկինքի տակ,
Թող դառնային միշտ հաւասար...
Ջօրաւորը յոխորտանքով
Ալ չճզմեր տկարն իսպառ..:

Ձէնք ու զրահ թող վերնային,
Անհետանարամէն սարսափ...
Թող երկինքը անձրեւէր սէր...
Փակ չմնար ոչ մէկ սահման..:

Արեւի տակ այս երկինքի
«Բարեւ» ըսէր՝ մարդը մարդուն,
Նոյն վայրկեանին թող հրաշքով՝
Բացուէր ամէն դարպաս ու դուռ..:

Ամէն տունէ ներս թող ցնծար,
Ուրախութիւն, հրճուանք հազար...
Ու աշխարհի մանուկներուն
Բարօրութեան յոյսը ժպտար..:

Ու ամէն տան ճոխ սեղանին,
Յորդէր գինին... երգ ու տաղով...
Իսկ Աստուծոյ օրհնութիւնը,
Ողջ մարդկութեան
նշխար դառնար:

Կոչնակներէն միշտ յաղթօրէն,
Խաղաղութեան ձայն ղօղանջէր...
Եւ աչքերէն վար մայրերուն,
Երջանկութեան արցունք թափէր..:

Չեմ հաւատար հրաշքներու...
Երանի թէ ես սխալիմ...
Տեսնեմ աշխարհն մեր խաղա-
ղած...
Տեսնեմ մարդը՝ ես ՄԱՐԴԱՑԱԾ...

ՄԱՐԻԱՆԱ ՊԷՐԹԻԶԼԵԱՆ-
ՂԱԶԱՐԵԱՆ

ՉԱՅՆ ՏՈՒՐ ԾԱՌ

ՍՐԲԱՑՈՒԱԾ ՏԱՐԱԾՔ

Պեղեցի գաղտնարանները
Ընդերքներուդ թաքուն
Մաշկիդ ցաւոտ սպիներուն տակ
Ուր դատարկ շտեմարաններուդ
Սերմերը կը փտտին
կը խամրին կ՛աղօտին
Բռնկումները երկրախորքերուդ
Որոնք վերապահուած էին մի-
միայն մեզի
Միասին ըմպելու
Խնկաբոյր գինիդ արբունքի
Ու այնտեղ հողի կոշտացած ու
ոսկրացած շերտերուն տակ
Ուր ցաւ կայ ամէնուր...
Չբացատրուող
Չվերծանուած բառերով
Բարդոյթաւորուած
Եւ իմ ներսիդին եւ ամէն շունչի

Պահուած է սիրտը պապիկիս
Բոլոր խեղճացած մարդոց սրտե-
րուն հետ
Թանկարժէք մասունքներու սա-
փորին մէջ՝
Պապենական տան դրան շեմին
տակ,
Ուր ես եւս այժմ պոկեցի
Եւ պահեցի սիրտը իմ արիւնլուայ
Ոտքերուդ տակ
Ընդհատակեայ դամբարաննե-
րուդ մէջ
Ամայի ճամբաներուդ ծալքերուն
Ուր կասեցուած տօնախմբութիւն-
ներու աղաղակներ
Դեռ կ՛արձագանքեն:
Ես մերթ ընդ մերթ
Կու գամ գիշերելու
Պալատներուդ բնակարաններուդ
խորքերը
Աչքերէ հեռու, սրտիդ մօտիկ
իշխանազուններուդ հետ...
Եւ ամէն օր կը լուամ մեր
երկուքին սրտերն ու
Միասնութեան կապը
Մոռացութեան փոշիներէն:

Դուն կը խոստանաս զիս
առանձին տանիլ Դաշտը արձակ
Խօսելու հետս լայնատարած
Եփրատի գետեզերքին
Զիս մկրտելու կոհակներուն հետ
Մահուան հաղորդութիւնը
ցոյց տալու
Դահիճներու ոտնահետքերով
լի ափերուն վրայ:

Եւ ես կը հասկնամ թէ դուն հոն ես,
այդ ալիքներուն մէջ,
Եւ երբ բոլոր ջուրերը յորդին
Ետքը խաղաղի հեղեղը
Միանալով իր պատկանած
ովկիանոսին
Արմատները որթերու
նռնենիներուդ կը ճիւղաւորուին
Հողդ եւ ջուրերդ կը ներկուին
Ո՛չ որդան կարմիրով գինիի գոյ-
նով
Կամ նռնենիի կենարար հիւթով:
Սրբացուած արեան կարմիր շի-
ճուկով
կարմիր աւիշով կը ծաղկի սերմը
Սպասուած սիրոյ
Եւ ոչ վատնումի
Կը սրբացուի հողդ
իր նշխարներով եւ աճիւններով
Ապրող շունչերով
Ժամանակի մը մէջ, անպայման
Որ կու գայ սրընթաց հեռուներէն
Որ հիմա ալ է
Արմաւենիի տերեւներուն
ճարճատիւնը յստակ կը լսուի
Անապատի խորքերէն
Երամներու եւ թեւաւորներու նման
կը թափահարին ճիւղերն
Ու ոգեղէններուդ թեւերը
Ազատութեամբ կը ծածանին
երկիրը շարժելով
Նռնենիներու ծաղկած ծաղիկներ,
որ սպիացած ցաւ ունին իրենց
մէջ մարմնիդ վրայ,կոծ ունին...
Յանկարծ կը յորդին հատիկներով
կը ճաքին ուրախութենէն իրենց
Սէգ ճիւղեր փռուած, ցիր ու ցան,
գետի մակերեսին
Պոկուած կոճղեր արմատախիլ
Կը տարուբերին... Բայց կ՛աղաղ-
կեն
Պոկուած կոճղեր արմատախիլ
Կը տարուբերին...
Բայց կ՛աղաղկեն
Կը ծփան նորոգուած եղեամին
հետ կազդուրող
Որ զարդարեն խորաններդ
կիսամերկ:
Եւ գիտե՞ս միլիոնաւոր հայ
մանուկներ
Լոյս աշխարհ չեկան
Որովհետեւ չար բնազդներով
տառապող
Մարդու կերպարով անասնադէմ
էակներ
Լռեցնել փորձեցին կանչը անոնց՝
Անհետացնելով արմատները,
Այդ մանուկները լուսաշող
ճերմակ փետուրներով
կը վերադառնան...
Կը ծնին ջուրէն
Ձայները անոնց
Վերանորոգ կոհակներուն ընդմէ-
ջէն կը մօտենան,
Կը շշնջան ինչ-որ բան ու կ՛երթան
Վերադառնալով իրենց ձեռքերուն
Փակուած դռներուդ բանալիները
Տուներուն, որոնց շաղախը չի
թափիր երբեք
Բանալու պղծուած տաճարնե-
րուդ դռները...

Լոյսին ժպտացող լուսերեսները
Նռնենիի ծաղիկներով
զարդարուած
Հիւթովը աճած
Սնած ջերմութեամբ ու
զօրութեամբ
Կը սկսին երգել
Եւ փառաբանել
Իսկ քու զօրութեան ձեռքդ
Կը հովանաւորէ զանոնք:

ԽԱՉԻԿ ՏԷՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ
ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԵՍ

«ՍՓԻՒՈՔԱՀԱՅ ԸԼԼԱԼ ՄԸ ԿԱՅ...»
ՎԱՀԷ ՕՇԱԿԱՆ

Ոչ մեկնումին է, ոչ ալ ժամանման
ճանաչումը ինքնութեանդ,
այլ՝ շարժումին մէջ յաւերժ
«քաղաքէ մ՛ուրիշ
քաղաքի միջև»:

Քեզ ընդունող չկայ,
ոչ ալ ճամբու դնող,
ոչ բարի գալուստ, ոչ ողջերթ,
ոչ ոք կ՛ընկերակցի քեզ,
ուղեցոյց չունիս,
չկայ կայարան, կանգառ միայն,
չկայ սկիզբ, միայն միջոց,
ուր կեանքը օրէնք է դաժան,
մահը՝ ոչ իմացեալ,
անմահութիւնն՝ անիմաստ:

էջը կազմեց
Նուսե ՆԻԿՈՂՈՍՅԱՆԸ

Հրատարակված է ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ:

Լրատվական գործունեությունն իրականացնող՝
Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային
մասնաճյուղ:
Հասցեն՝ Շիրակի մարզ, Գյումրի, Գորկու 62
Վկայական N 01Բ 001543

տրված է 21.03.2005թ.
հեռ. (094) 53 44 64
Խմբագրական խորհուրդ
Գլխավոր խմբագիր՝
Ռոզա Հովհաննիսյան

Համակարգչային ձևավորումը՝ «Էլդորադո Պրինտ» ՍՊԸ
Տպագրված է «Վան Արյան» հրատարակչատան
տպարանում
Տպաքանակը՝ 500
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ